


Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 17.08.2022թ. չորեքշաբթի թիվ 30 (1055)

# Վերափոխումն Սուրբ Աստվածածնի (Խաղողօրհնեք)

**Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման (Խաղողօրհնեք)** տոնը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ **տաղավար** (գլխավոր) տոներից է, նշվում է օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը: Այս տարի այն նշվեց անցած կիրակի՝ օգոստոսի 14-ին:

**Մեր Տեր Հիսուս Քրիստոսի** *խաչելությունից* հետո **Աստվածամայրը**, Իր **Որդու** պատգամին հնազանդ (Հովհ. ԺԹ 26-27), շուրջ 15 տարի ապրեց **Հովհաննես** Աստվածաբան առաքյալի խնամատարության ներքո: **Միածին Որդու** համբարձումից հետո **Աստվածամայրը** օրեր ու գիշերներ հարատեւում էր պահքի ու աղոթքի մեջ: Հաճախ այցելում էր **Տիրոջ** թափուր գերեզման եւ ծնկաչոք աղոթում:

**Գողգոթա** կատարած իր այցելություններից մեկի ժամանակ Նրա առջեւ հայտնվում է **Գաբրիել** հրեշտակապետը՝ արմավենու ճյուղը ձեռքին, ու ավետում **Սուրբ Աստվածածնի՝** երկրային աշխարհից դեպի վերին՝ երկնային **Երուսաղեմ** վերափոխվելու, ինչպես նաեւ դրա ժամանակի մասին: Վերադառնալով տուն՝ **Աստվածածինն** այդ մասին պատմում է Հովհաննեսին, իսկ հետո մյուս առաքյալներին ու ցույց տալիս Գաբրիել հրեշտակապետի կողմից տրված արմավենու ճյուղը, որից երկնային լույս էր տարածվում:

Այսպիսով, **Սուրբ Կույսը**, պատրաստվելով երկնային աշխարհ ճանապարհվելուն, պատվիրեց, որ իրեն թաղեն **Գեթսեմանիի** ձորակում: Ապա այդ սենյակում, պառկելով մահճին, մնաց միայնակ: Վերջապես լրացավ այն ժամը, երբ պետք է կատարվեր նրա՝ երկրից երկինք վերափոխումը:

Առաքյալները շրջապատել էին այն զարդարված մահիճը, ուր ընկողմանել էր **Աստվածամայրը**: Հանկարծ շողաց չտեսնված մի լույս: Ներկաները սարսափեցին, երբ սենյակի վերեւում՝ ճառագայթների ներքո, հայտնվեց **Հիսուս Քրիստոսը՝** հրեշտակների ու սրբերի ուղեկցությամբ:

Տեսնելով իր **Որդուն՝** հրեշտակների զորքով շրջապատված, **Աստվածամայրը** թեթեւորեն բարձրացավ մահճից, խոնարհվեց **Տիրոջը** եւ հանգիստ, ասես քնի մեջ, հոգին ավանդեց իր **Միածին Որդու** ձեռքը:

**Աստվածամոր** երկրավոր կյանքի վախճանը *«ննջում»* եւ ոչ թե *«մահ»* բառով է որակվում՝ հասկանալի դարձնելու համար նրա՝ երկինք փոխադրված լինելը:

***շարունակությունը՝ էջ 7***







Շախմատ

## Հայաստանը մնում է գերտերություն

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Շախմատի համաշխարհային 44-րդ օլիմպիադայում արծաթե մեդալներ նվաճած Հայաստանի տղամարդկանց հավաքականի ներկայացուցիչներին՝ գլխավոր մարզիչ **Արման Փաշիկյանին,** թիմի ավագ **Հրաչիկ Թավադյանին,** շախմատիստներ **Ռոբերտ Հովհաննիսյանին, Սամվել Տեր-Սահակյանին** եւ **Մանուել Պետրոսյանին:** Երկրից բացակայելու հանգամանքով պայմանավորված՝ հանդիպմանը ներկա չէին շախմատիստներ **Հրանտ Մելքումյանը** եւ **Գաբրիել Սարգսյանը:**

***շարունակությունը՝ էջ 2***

## Արծաթ, որ ոսկու արժեք ունի

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** այսօր ընդունել է Շախմատի համաշխարհային 44-րդ օլիմպիադայում արծաթե մեդալներ նվաճած Հայաստանի տղամարդկանց հավաքականի անդամներին:

Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ **Սմբատ Լպուտյանը,** մարզիչներ **Հրաչիկ Թավադյանն** ու **Արման Փաշիկյանը,** ինչպես նաեւ շախմատիստներ **Գաբրիել Սարգսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Սամվել Տեր-Սահակյանը** եւ **Մանուել Պետրոսյանը:** Հանդիպմանը ներկա չէր միայն **Հրանտ Մելքումյանը.** նա բացակայում է երկրից:

Վահրամ Դումանյանը շնորհավորել է հայ շախմատիստներին ու նրանց պարգեւատրել ԿԳՄՍ նախարարության ոսկե մեդալներով:

*«Համաշխարհային օլիմպիադայում ձեր նվաճած արծաթե մեդալը մեզ համար ոսկու արժեք ունի: Հպարտ եմ այս հաղթանակով եւ ուզում եմ վստահ լինեք, որ պատրաստ ենք ոլորտի զարգացման եւ առաջընթացի համար օգնել, ինչով կկարողանանք: Մաղթում եմ ձեզ նորանոր նվաճումներ: Շնորհակալ եմ նաեւ այն մարդկանց, ովքեր իրենց ներդրումն ունեն այս հաղթանակի մեջ»,-* ասել է ԿԳՄՍ նախարարը:

***շարունակությունը՝ էջ 2***

## Առաջին դասարանցիների ընդունելության համար պահանջվող փաստթղթերը

Առցանց հայտագրումից հետո առաջին դասարան հաճախող երեխաների՝ դպրոց ընդունվելու համար պահանջվող փաստաթղթերը ծնողները պետք է ուսումնական հաստատություն ներկայացնեն՝ համաձայն նախարարի թիվ 1640-Ն հրամանով սահմանված կարգի:

Սովորողին դպրոց ընդունելու համար ծնողը ներկայացնում է՝

*1) դիմում՝ ուղղված տնօրենին,*

*2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,*

*3) լուսանկար՝ 3x4 չափսի:*

ԿԳՄՍ նախարարությունը ստացել է ահազանգեր, որ որոշ դպրոցներ պահանջում են բժշկական տեղեկանք:

Ուշադրությո՛ւն. դպրոցը, բացի վերոնշյալ փաստաթղթերից, իրավունք չունի պահանջելու որևէ այլ փաստաթուղթ:

Ծնողները փաստաթղթերը կարող են դպրոց ներկայացնել յուրաքանչյուր աշխատանքային օր:

# Հայաստանը մնում է գերտերություն

*սկիզբը՝ էջ 1*

Շնորհավորելով հավաքականի անդամներին Շախմատի համաշխարհային օլիմպիադայում արծաթե մեդալներ նվաճելու կապակցությամբ՝ վարչապետը նշել է.

*«Հարգելի՛ պարոն Փաշիկյան,*

*Հայաստանի Հանրապետության շախմատի հավաքականի հարգելի՛ անդամներ,*

*Նախ ուզում եմ շնորհավորել բոլորիս եւ ձեզ՝ Հայաստանի շախմատի հավաքականի հերթական մեծ հաջողության առիթով:*

*Իհարկե, Հայաստանի շախմատի հավաքականը մեր երկրի պատմության թերեւս ամենատիտղոսակիր հավաքականն է՝ երեք անգամ Շախմատային օլիմպիադայի ոսկե մեդալ է նվաճել, մեկ անգամ՝ արծաթե, երեք՝ բրոնզե, Շախմատի թիմային գավաթի աշխարհի հաղթող, այսինքն՝ տիտղոսները շատ երկար կարելի է թվարկել:*

*Ուզում եմ անձամբ ձեզ շնորհակալություն հայտնել՝ ձեր կատարած աշխատանքի համար եւ ընդգծել հետեւյալը, որ Հայաստանի՝ մինչեւ 2050 թվականի վերափոխման ռազմավարության մեջ մենք, որպես նպատակ, ֆիքսել ենք, որ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը նվաճի Շախմատի աշխարհի անհատական չեմպիոնի կոչումը: Սա ձեւակերպել ենք որպես ռազմավարական նպատակ Հայաստանի համար, եւ ուզում եմ իմանաք, որ մենք նաեւ ձեր աջակցությամբ եւ խորհրդով կամ հայտով պատրաստ ենք անհրաժեշտ միջոցառումները ձեռնարկել՝ դրան հասնելու համար:*

*Կարծում եմ՝ սա իրոք Հայաստանի համար ռազմավարական նպատակ է, եւ այն կյանքի կոչելու համար պետք է շատ մեծ աշխատանք կատարել: Այն, ինչ այսօր ունենք, հնարավորություն է տալիս, որ մենք զարգացման հաջորդ քայլն անենք, եւ դրա համար, իհարկե, Կառավարությունը, ես անձամբ, մենք պատրաստ ենք բոլոր ջանքերը գործադրել: Կրկին ուզում եմ շնորհավորել: Եթե ուշադրություն դարձրեցիք, ես մեզ եմ շնորհավորում առաջին հերթին եւ ոչ թե ձեզ, բայց նաեւ ձեզ եմ շնորհավորում: Ես ձեզ ուզում եմ շնորհակալություն հայտնել կատարված իսկապես փառապանծ աշխատանքի համար»:*



Նիկոլ Փաշինյանը ՀՀ շախմատի հավաքականի ներկայացուցիչների հետ մտքեր է փոխանակել Շախմատի համաշխարհային 44-րդ օլիմպիադայի ընթացքի, մրցաշարից ստացած տպավորությունների, ինչպես նաեւ մեր երկրում ինտելեկտուալ այս սպորտաձեւի զարգացման հեռանկարների շուրջ: Արծարծվել են պետական աջակցության ծրագրերին, մայրաքաղաքում ու մարզերում շախմատի դպրոցների բարելավմանը եւ նոր ենթակառուցվածքների ձեւավորմանը, մարզիկների եւ մարզիչների գործունեության խրախուսմանը վերաբերող եւ այլ հարցեր: Վարչապետը վերահաստատել է Կառավարության՝ իր գործիքակազմով ոլորտի զարգացումը խթանելու պատրաստակամությունը եւ հանձնարարականներ տվել պատասխանատուներին:

Հաջորդիվ տեղի է ունեցել պարգեւատրման հանդիսավոր արարողություն:

Շախմատի բնագավառում ունեցած նշանակալի ավանդի համար՝ Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականի գլխավոր մարզիչ Արման Փաշիկյանը պարգեւատրվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալով, հավաքականի ավագ Հրաչիկ Թավադյանը, շախմատիստներ Ռոբերտ Հովհաննիսյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Մանուել Պետրոսյանը, Գաբրիել Սարգսյանը եւ Հրանտ Մելքումյանը պարգեւատրվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի շնորհակալագրերով եւ Հայաստանի Հանրապետության 30-ամյակին նվիրված հուշադրամներով:

Վարչապետ Փաշինյանը Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականի ներկայացուցիչներին է հանձնել բարձր պարգեւները եւ եւս մեկ անգամ գովեստի խոսքեր ուղղել նրանց՝ իրենց շախմատային հաջողություններով Հայաստանի հեղինակությունը միջազգային մրցաշարերում բարձր պահելու համար:

# Արծաթ, որ ոսկու արժեք ունի

*սկիզբը՝ էջ 1*

Նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն ընդգծել է՝ հայ շախմատիստները կոտրել են այն կարծրատիպը, թե մեր երկրում թիմային մարզաձեւերն այդքան էլ զարգացած չեն. *«Այն, ինչ դուք արեցիք, վեր է բոլոր գնահատականներից: Սա կյանքիս ամենահաճելի սենսացիան էր: Դուք իսկապես հաղթանակի բերկրանք պարգեւեցիք մեր ազգին, իսկ դա ամենաթանկն է: Հպարտ ենք ձեզնով: Ամենակարեւորն այն է, որ ցույց տվեցիք թիմային բարձր որակներ, խաղացիք մեկդ մյուսի համար, իսկ դա շատ գնահատելի է»:*

Հավաքականի գլխավոր մարզիչ Արման Փաշիկյանը եւս կարեւորել է թիմային միասնականությունը՝ ընդգծելով, որ չկային անձնական ամբիցիաներ. *«Օլիմպիադայից առաջ ուսումնամարզական հավաք անցկացրինք Ծաղկաձորում, որտեղ նաեւ ֆիզիկական պատրաստվածության վրա ուշադրություն դարձրինք: Կարծում եմ՝ դա եւս մեզ օգնեց: Ինչ վերաբերում է մրցաշարին, ապա պետք է նշեմ՝ հանդես եկանք շատ միասնական: Չկային անհատական ամբիցիաներ, շատ միասնական էինք, անգամ բոլորը խոսում էին այն մասին, որ հայերի թիմն ամեն ինչ միասին է անում: Բոլոր տղաներն էլ հիանալի հանդես եկան՝ իրար օգնելով: Ափսոսում ենք, որ չհաղթեցինք մրցաշարում, քանի որ բավարար միավորներ էինք հավաքել: Պատմության մեջ երեւի չէր եղել, որ այսքան միավորներով թիմը հաղթող չդառնա»:*

Գլխավոր մարզչի խոսքով՝ Համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի հավաքականին անգամ մրցակից թիմերն էին երկրպագում, խաղերից առաջ մոտենում ու հաջողություն էին մաղթում մեր թիմին:



Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ Սմբատ Լպուտյանն ընդգծել է՝ շախմատային թիմում շատ մեծ է նաեւ առաջին համարի դերակատարությունը. *«Շատ կարեւոր է, որ առաջին տախտակի վրա հանդես եկող շախմատիստն աչքի ընկնի նաեւ մարդկային բարձր որակներով ու որպես առաջատար՝ թիմին կարողանա իր ետեւից տանել: Շատ ուրախ ենք, որ ի դեմս Գաբրիել Սարգսյանի՝ մենք հենց այդպիսի առաջատար ունենք»:*

Նախարարի հետ հանդիպման ընթացքում շախմատիստները պատմել են իրենց տպավորությունների, խաղերի ընթացքի, լարված ու հետաքրքիր պահերի մասին:

Հայաստանի հավաքականի առաջին համար Գաբրիել Սարգսյանը խոստովանում է՝ թիմի համար եւս անակնկալ էր այս արդյունքը. *«Իհարկե, սպասում էինք, որ լավ հանդես կգանք, բայց ինչ-որ առումով այս արդյունքն անակնկալ էր մեզ համար: Բոլորս արեցինք այն, ինչ կարող էինք: Առավելագույնս նվիրվեցինք ու ամբողջ ընթացքում մտածում էինք բացառապես մրցաշարի մասին: Հաշվի առնելով այն, որ տղաներն օլիմպիադաներում հանդես գալու փորձ չունեին, շատ լավ հանդես եկան: Առաջին փորձից արեցին այն, ինչն իրենցից պահանջվում էր: Երիտասարդ տարիքում այսպիսի լարվածության դիմանալը շատ դժվար է: Առաջին անգամ էինք հանդես գալիս Արման Փաշիկյանի գլխավորությամբ, ու նրա համար եւս դժվար էր: Այն, որ կարողացանք պարտությունից հետո չհուսահատվել ու շարունակել պայքարը, մեծավ մասամբ հենց նրա շնորհիվ էր»:*

24-ամյա Մանուել Պետրոսյանը, ով առաջին անգամ էր հավաքականի կազմում մասնակցում Շախմատի օլիմպիադային, ասում է՝ սկզբում լարվածություն է ունեցել. *«Սկզբում չէի հարմարվում, շատ ծանր էի խաղում, անգամ Մադագասկարի հետ շատ ծանր խաղ ունեցանք ու տղաներով կատակում էինք այդ թեմայով: Դժվարությամբ հարմարվեցի մթնոլորտին, երրորդ տուրում պարտվում էի ու գիտակցեցի՝ թիմն իմ պատճառով կարող է զիջել խաղը. շատ էմոցիոնալ պահ էր: Հրաշքով ոչ-ոքի խաղացի, բայց էմոցիաներս խեղդում էին ինձ: Մարզչին խնդրեցի հաջորդ տուրում ինձ հանգիստ տրամադրել: Հետո արդեն ընտելացա մթնոլորտին, կողքից նայելով՝ շատ բաներ հասկացա ու վերջին տուրերում, երբ արդեն Սամվելի նյարդերն էին տեղի տվել, վերադարձա ու լավ հանդես գալով՝ կարողացա օգնել թիմին»:*

Ռոբերտ Հովհաննիսյանն էլ նշում է՝ օլիմպիադայի 11 տուրերում հասցրել է տարբեր էմոցիաներ ունենալ: Ի դեպ, Հովհաննիսյանն արծաթե մեդալ է նվաճել 4-րդ խաղատախտակի վրա: Նրա խոսքով՝ այդ մասին պարգեւատրման արարողության ժամանակ է իմացել. *«Մրցաշարը շատ դժվար, հոգնեցուցիչ ու նաեւ շատ դրամատիկ ընթացք ունեցավ: Հատկապես դրամատիկ էր Եգիպտոսի եւ ԱՄՆ-ի դեմ պարտիաները: Չէի մտածել, որ անհատական մեդալ կնվաճեմ: Ուրախ եմ, որ տղաների խաղը ստացվեց»:*

Սամվել Տեր-Սահակյանը շնորհակալություն է հայտնել հայկական պատվիրակությանն ու ընդգծել՝ իր համար պատիվ էր այսպիսի թիմի հետ խաղալը. *«Բոլոր տղաները հիանալի հանդես եկան, բայց այն, ինչ արեց Գաբրիել Սարգսյանը, մարդկային ուժերից վեր էր: Ռոբերտին ու Հրանտին էլ կուզեի առանձնացնել: Ռոբերտը մեր ռմբարկուն էր, ինչպես Գաբրիելը, մեզ մի շարք միավորներ պարգեւեց, իսկ Հրանտը մեր հենասյունն էր ու պաշտպանը: Ամենակարեւորն այն էր, որ թիմում չկային անձնական ամբիցիաներ: Կարեւոր էին միայն թիմն ու թիմային հաջողությունը»:*

Հիշեցնենք՝ Հայաստանի հավաքականը վաստակած 19 միավորով դարձել է Հնդկաստանում անցկացված Համաշխարհային օլիմպիադայի փոխչեմպիոն: Նույնքան միավորով, սակայն լրացուցիչ ցուցանիշներով չեմպիոնի կոչումը նվաճել է Ուզբեկստանի ընտրանին: Լավագույն եռյակը 18 միավորով եզրափակել է Հնդկաստանի երկրորդ թիմը:

Պաշտոնական

# Սահմանվել է խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը

ՀՀ կառավարության՝ 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1265-Ն որոշմամբ՝ սահմանվել է Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը, որում մեծ դեր է վերապահված կրթության ոլորտում համընդհանուր ներառականության ապահովմանը՝ որպես կրթական քաղաքականության առաջնային ուղղություն:

Որոշումն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարի 1-ից:

Խելամիտ հարմարեցումները նախատեսված են այն անձանց համար, որոնք ունեն հաշմանդամությամբ պայմանավորված ֆունկցիոնալության սահմանափակում ուսումնական գործընթացին մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցություն ցուցաբերելու առումով:

Խելամիտ հարմարեցումներ ապահովելու պարագայում անձը կկարողանա բավարար կատարել գործողությունները, որոնք պարտավոր է կատարել կամ ակնկալվում է, որ կկատարի ուսումնական հաստատություն ընդունվելիս՝ ուսումնական գործընթացին մյուսների հետ հավասար մասնակցելու համար:

Խելամիտ հարմարեցումների համար կարող է դիմել անձը (երեխաների դեպքում՝ օրինական ներկայացուցիչը), ինչպես նաեւ *«Կրթության մասին»* ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դիմորդը՝ ուսումնական հաստատություններ ընդունելության գործընթացի, իսկ սովորողն ուսումնական հաստատությունում սովորելու ամբողջ ընթացքում:

Համապատասխան կարիք ունեցող անձն իրավունք ունի ստանալ խելամիտ հարմարեցումներ՝ անկախ սեռից, ռասսայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Խելամիտ հարմարեցումների տեսակներն են.

*- ոչ տեխնոլոգիական բնույթի հարմարեցումներ, որոնց համար ֆինանսական ծախս չի պահանջվում (աշխատանքի ժամանակացույցի վերանայում՝ առանց լրացուցիչ աշխատողի ներգրավման, ընդմիջման ժամերի վերանայում եւ այլ նման բնույթի հարմարեցումներ),*

*- ցածր տեխնոլոգիական լուծումներ պահանջող հարմարեցումներ, որոնք պարզ են, չեն առաջացնում լրացուցիչ դժվարություններ, հեշտությամբ կարող են ներդրվել գրեթե յուրաքանչյուր միջավայրում (դռան բռնակի փոխարինում հարմարեցված բռնակով, խոշորացույցի տրամադրում, անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքում վերհանված կարիքների ապահովում),*

*- բարձր տեխնոլոգիական լուծումներ պահանջող հարմարեցումներ, որոնց դեպքում օգտագործվում են առաջադեմ կամ բարդ սարքավորումներ (աջակցող միջոցներ՝ ներառյալ ծրագրային ապահովում՝ հաշվի առնելով անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքում վերհանված ցուցումները, ինչպես նաեւ ինտերակտիվ երկխոսության արդյունքում վերհանված կարիքները),*

*- աջակցության գործողություններ (ուղեկցողներ, շուրթերով հաղորդակցվող թարգմանիչ, ժեստերի լեզվի թարգմանիչ, գրառումներ կատարող, թարգմանիչներ կույր եւ խուլ անձանց համար կամ աջակցող կենդանիներ, անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքում վերհանված ցուցումների, ինչպես նաեւ ինտերակտիվ երկխոսության արդյունքում վերհանված այլ կարիքների ապահովում),*

*- կողմերի համաձայնությամբ կարող են ներառվել եւ կատարվել նաեւ այլ գործողություններ:*

Հանրակրթական ուսումնական հաստատություններում խելամիտ հարմարեցումներն իրականացվում են *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքով սահմանված՝ պետական բյուջեի միջոցներից տրամադրվող նպատակային ֆինանսավորման շրջանակում:

Խելամիտ հարմարեցումների ապահովման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է *«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին»* ՀՀ օրենքով սահմանված կարգով: Սահմանված ժամկետներում եւ կարգով խելամիտ հարմարեցումներ չստանալու դեպքում անձը կարող է դիմել դատարան:

Ինտերակտիվ երկխոսություն

Նշենք նաեւ, որ խելամիտ հարմարեցումների համար դիմող անձը պարտավոր է մասնակցել ինտերակտիվ երկխոսությանն անձամբ (կամ օրինական ներկայացուցչի միջոցով): Ինտերակտիվ երկխոսությունը գործընթաց է, որի շրջանակում անձը եւ խելամիտ հարմարեցումներ ապահովելու պարտականություն կրողը քննարկում են անձի հարմարեցումների կարիքները, որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվում անձի համար ընդունելի խելամիտ հարմարեցումների ապահովման ուղղությամբ: Ֆունկցիոնալության կամ կարիքների սահմանափակման աստիճանի փոփոխություն դեպքում անձը պարտավորն է այդ մասին տեղյակ պահել հարմարեցումներ ապահովելու պարտականություն կրողին:

Ինտերակտիվ երկխոսությանը հաշմանդամություն ունեցող անձի (անչափահասի դեպքում՝ օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ կարող են ներգրավել մանկավարժահոգեբանական աջակցության կամ խելամիտ հարմարեցումների ծառայություններ մատուցող պետական եւ մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Երիտասարդության միջազգային օր

# Վահրամ Դումանյանի շնորհավորական ուղերձը



Սիրելի՛ երիտասարդներ,

Շնորհավորում եմ բոլորիդ՝ այս լուսավոր օրվա՝ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ:

Անվիճարկելի ճշմարտություն է, որ ցանկացած երկրում երիտասարդությունն է փոփոխությունների առաջամարտիկը, յուրաքանչյուր հասարակության շարժիչ ուժը, եւ առաջադեմ են այն պետությունները, որտեղ երիտասարդները մասնակից են որոշումների ընդունմանը:

Մտքով եւ հոգով առողջ, կրթված, նպատակասլաց, նորարարական գաղափարներով զինված եւ նախաձեռնող երիտասարդությունն է մեր ազգի եւ պետության բարեկեցիկ ապագայի գրավականը: Այդպիսին ենք մենք ուզում տեսնել մեր երիտասարդությանը, եւ դրան են ուղղված պետության կողմից իրականացվող երիտասարդական հասցեական եւ թիրախային ծրագրերն ու միջոցառումները:

Այս տարի Երիտասարդության միջազգային օրը կրում է *«Սերունդների համերաշխություն. ստեղծելով աշխարհ՝ բոլոր տարիքի մարդկանց համար»* խորագիրը: Այս համատեքստում, իմ խորին համոզմամբ, երիտասարդությունը տարիքային սահմանափակում չունի. երիտասարդ են նրանք, ովքեր մշտապես հանդես են գալիս նորարարական գաղափարներով ու նախաձեռնություններով, շրջապատին համակում են երիտասարդական ավյունով ու եռանդով, պատրաստակամ են ու մասնակից դրական փոփոխություններին:

Երիտասարդության ոլորտում կատարված ցանկացած ներդրում համարվում է ներդրում վաղվա օրվա, լավ ապագա ունենալու գործում: Ըստ այդմ՝ վստա՛հ եղեք, որ ՀՀ կառավարությունը շարունակելու է իրականացնել բազմաթիվ երիտասարդական ծրագրեր՝ միտված երիտասարդների ներուժի բացահայտմանը, հնարավորությունների ու կարողունակությունների զարգացմանը, ինքնադրսեւորման համար նպաստավոր միջավայրի ձեւավորմանը եւ հատկապես մարզային երիտասարդության ինքնաիրացման համար համապատասխան պայմանների ստեղծմանը:

Եղե՛ք նորարար ձեր ցանկություններում եւ նպատակներում, համարձակ՝ ձեր որոշումներում, հետեւողական՝ ձեր գործողություններում: Քանզի ապագան ձերն է: Ցանկանում եմ, որ այս գիտակցմամբ ապրեք եւ արարեք՝ ի շահ հարազատ համայնքի, մարզի, ի վերջո, մեր պաշտելի հայրենիքի:

Սիրելի՛ երիտասարդներ, մաղթում եմ ձեզ խաղաղ երկինք, անուր կամք, վճռականություն եւ ապագայի նկատմամբ անսասան լավատեսություն:

Նոր հաջողություններ

# Միջազգային օլիմպիադայում

Ինֆորմատիկայի միջազգային 34-րդ օլիմպիադայում ՀՀ թիմի մասնակիցները նվաճել են 2 բրոնզե մեդալ:

Ինդոնեզիայի Ջոկյակարտա քաղաքում հիբրիդային (առկա եւ առցանց) ձեւաչափով տեղի է ունեցել Ինֆորմատիկայի միջազգային 34-րդ օլիմպիադան, որին մասնակցել են աշխարհի 90 երկրի 353 աշակերտներ:

*«Քվանտ»* վարժարանից **Արայիկ Խալաթյանը** (12-րդ դասարան) եւ **Համլետ Պետրոսյանը** (11-րդ դասարան) արժանացել են բրոնզե մեդալների:

Օլիմպիադայում իրենց ուժերն են չափել նաեւ Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ **Սամվել Աբելյանը** եւ *«Քվանտ»* վարժարանի 9-րդ դասարանի աշակերտ **Գագիկ Գեւորգյանը:** Հայաստանյան ներկայացուցիչներն օլիմպիադային մասնակցել են առկա տարբերակով:

Հայաստանի թիմը ղեկավարել են ԵՊՀ ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դասախոս **Արմեն Անդրեասյանը** եւ նույն ֆակուլտետի ասպիրանտ **Լեւոն Մուրադյանը:**

Հիշեցնենք, որ 2021 թ. Հայաստանի թիմն Ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայում արժանացել էր երեք՝ 1 արծաթ եւ 2 բրոնզ մեդալների:

# Միջազգային շախմատային մրցաշարում

Հայ-Ռուսական համալսարանի *«Լրագրություն»* ուղղության ուսանողուհի **Աննա Խաչատրյանը** Վրաստանում կայացած *«15th Nana Alexandria Cup 2022»* շախմատային խոշոր մրցաշարում (կանանց միջեւ) գրավել է առաջին տեղը:

*«Միջազգային այս մրցաշարին մասնակցել է 9 երկրների ավելի քան 370 շախմատիստ: Մեր պատվիրակությունը հերթական անգամ արդարացրեց սպասելիքները: Ես շատ ուրախ եմ, որ մեր համալսարանում շախմատին մեծ ուշադրություն են դարձնում. դա օգնում է միաժամանակ ե՛ւ մարզվել, ե՛ւ սովորել»,-* նշել է Աննա Խաչատրյանը:

Նշենք, որ 9 տուրից բաղկացած մրցաշարն (հուլիսի 15 - 24) անցկացվել է Վրաստանի Փոթի քաղաքում, որին մասնակցել է ավելի քան 50 հայ շախմատիստ:



Օգոստոսյան

# Կմեկնարկեն ավանդական խորհրդակցությունները

Օգոստոսի 19-ից դպրոցների տնօրենների, կրթության ոլորտի մարզային պատասխանատուների մասնակցությամբ մեկնարկում են հանրակրթական ուսումնական հաստատությունների օգոստոսյան խորհրդակցությունները:

Խորհրդակցությունների նպատակն է նոր ուսումնական տարվան ընդառաջ ոլորտի խնդիրները քննարկել տեղերում՝ տնօրենների, հանրակրթության մարզային պատասխանատուների հետ:

Քննարկումների օրակարգում ընդգրկված են 2022-2023 ուսումնական տարվա ընթացիկ գործողություններին վերաբերող հարցեր: Ըստ սահմանված ժամանակացույցի՝ հանրակրթական դպրոցների տնօրենների խորհրդակցությունները կմեկնարկեն Տավուշի մարզից, օգոստոսի 19-ին:

ՀՀ Արագածոտնի մարզում խորհրդակցությունները կանցկացվեն օգոստոսի 23-ին, Արմավիրում՝ օգոստոսի 24-ին, Արարատում եւ Վայոց ձորում՝ օգոստոսի 25-ին, Սյունիքում (Կապան եւ Գորիս)՝ օգոստոսի 26-ին, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերում՝ օգոստոսի 29-ին, Շիրակում եւ Լոռիում՝ օգոստոսի 30-ին: Երեւան քաղաքի նախադպրոցական, հանրակրթական, ինչպես նաեւ ԿԳՄՍՆ ենթակայության ուսհաստատությունների տնօրենների խորհրդակցությունները տեղի կունենան օգոստոսի 31-ին:

Փորձ

# Կոմունիկացիաները կրթության կառավարման համակարգում

21-րդ դարում անչափ կարեւոր է կոմունիկացիաների դերը կառավարման համակարգում: Կոմունիկացիան կրթական կազմակերպությունում պետք է նպաստի ուսումնական հաստատությունների ղեկավարների հաղորդակցական կոմպետեցիաների ձեւավորմանը՝ կապված կրթական գործընթացում եւ կառավարման մեջ հաղորդակցական փոխգործակցության գործիքների, սկզբունքների, մոդելների արդյունավետ օգտագործման հետ:

Ուսումնական հաստատության հաղորդակցական միջավայրում հասկանում ենք կրթության որոշակի որակ ապահովող պայմանների մի շարք՝

*- հիմնական արժեքների եւ վերաբերմունքի համակարգ (դպրոցի առաքելությունը, կրթության նպատակներն ու արժեքները, նորմեր եւ սկզբունքներ եւ այլն),*

*- ուսումնական հաստատության համար համապատասխան տեղեկատվության հետ աշխատելու մեթոդներ,*

*- կրթական գործընթացի մասնակիցների միջեւ կապեր եւ փոխազդեցություններ (հաղորդակցման ռազմավարություններ, դասավանդման եւ կառավարման ոճեր, գնահատման եւ խթանման մեթոդներ եւ այլն):*

Տեղեկատվության միջոցով իրականացվում է կառավարման օղակների եւ մակարդակների միջեւ կապը: Տեղեկատվությունը կարող է լինել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին: Արտաքին տեղեկատվությունը բնորոշում է շրջակա միջավայրի հետ կազմակերպության կապը եւ պարունակվում է վերադաս մարմինների հրամաններում, հրահանգներում, կարգադրություններում, պլաններում, գիտության եւ տեխնիկայի նվաճումների, շուկայի ցուցանիշների մասին հաղորդումներում եւ այլն: Ներքին տեղեկատվությունը վերաբերում է արտադրության գործընթացին, սարքավորումների վիճակին, տեխնոլոգիային եւ այլն: Տեղեկատվությունը մեծ նշանակություն ունի կազմակերպության ներքին եւ արտաքին կապերի կառավարման համար: Տեղեկատվության տիրապետման աստիճանի բնութագրիչներ են՝

*- տեղեկատվության քանակը կամ ամբողջականությունը,*

*- դրա նշանակությունը,*

*- հավաստիությունը,*

*- վստահելիությունը,*

*- հասկանալի լինելը,*

*- արդիականությունը,*

*- ճկունությունը,*

*- տեղեկատվական գործընթացի տնտեսական արդյունավետությունը (տեղեկատվությունից ստացված շահույթի եւ դրա վրա կատարված ծախսերի հարաբերակցությունը),*

*- տեղեկատվության պաշտպանվածության ապահովումը:*

Կոմունիկացիաները կարող են ունենալ երկու ուղղություն՝ վերեւից ներքեւ (վարընթաց) եւ հակառակը՝ ներքեւից վերեւ (վերընթաց): Կոմունիկացիաները վերեւից ներքեւ ուղղվածություն ունեն, երբ կառավարման բարձր մակարդակից տեղեկությունը հաղորդվում է ստորադաս մակարդակին: Կառավարման ստորադաս մակարդակներին հաղորդվում է տեղեկություն ընթացիկ խնդիրների, տարբեր առաջադրանքների, ինչպես նաեւ կատարվելիք աշխատանքների առաջնահերթության փոփոխության եւ այլնի մասին: Բացի նշված վարընթաց փոխանակումից, կազմակերպություններում իրականացվում են վերընթաց հաղորդակցումներ: Այսինքն տեղեկության փոխանցումը ստորին մակարդակներից բարձրերին, որի շնորհիվ վերջինները տեղեկացվում են ստորին մակարդակներում առկա հիմնահարցերի եւ իրավիճակի մասին ու առաջարկում դրանց վերացման (կարգավորման) հնարավոր տարբերակներ: Վերընթաց եղանակով տեղեկության փոխանակումը հիմնականում տեղի է ունենում հաշվետվությունների, առաջարկությունների, ահազանգերի, զեկուցագրերի ձեւով՝ ի լրումն վարընթաց եւ վերընթաց եղանակով տեղեկության:

Տեղեկատվության գործընթացը կարելի է տրոհել չորս հիմնական տարրերի.

*ա) ուղարկող անձ (կոմունիկատոր), որը մշակում է գաղափարներ կամ հավաքում եւ հաղորդում տեղեկություններ,*

*բ) հաղորդագրություն՝ հատուկ խորհրդանիշներով կոդավորված բուն տեղեկություն,*

*գ) տեղեկությունը կամ գաղափարը հաղորդելու միջոց (կապուղի),*

*դ) ստացող անձ (ռեցեպիենտ), որը ստանում է տեղեկատվությունը եւ մեկնաբանում:*

Կոմունիկացիոն գործընթացի փոխկապակցված փուլերն են

*1. գաղափարի ծնունդը,*

*2. կոդավորում եւ կապուղու ընտրություն,*

*3. հաղորդում,*

*4. ընդունում եւ վերծանում (ապակոդավորում):*

Կոմունիկացիոն գործընթացի արդյունավետության ապահովման համար բացառիկ նշանակություն ունի հետադարձ կապը: Դրանով է ճշտվում, թե որքանով հավաստի է ընկալվել հաղորդագրությունը:

Այժմ միջանձնային հաղորդակցության մասին: Միջանձնային կոմունիկացիայի եւ, ընդհանուր առմամբ, մարդկային հաղորդակցության արդյունավետության կարեւոր պայմաններից մեկը անձի այսպես կոչված *«հաղորդունակությունն»* է, այսինքն այն կարողությունը, որով մարդը բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն ձեւակերպում է իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում եւ ստանում՝ ճշտորեն վերծանելով դրանք, զանազանելով կարեւորն ու երկրորդականը, ապահովելով պատշաճ ուղիղ հետադարձ կապը:

Նշենք, որ հաղորդունակությունը հույժ անհրաժեշտ կարողություն է ղեկավարի համար, քանի որ նրա առօրյա գործունեության անբաժանելի մասն է մարդկանց ենթակաների, գործընկերների, վերադասների հետ հաղորդակցումը: Մեր դիտարկմամբ, ղեկավարի եւ ենթակայի միջեւ տեղեկության փոխանակման բազմաթիվ տարատեսակներից են.

*- խնդիրների, առաջարկությունների եւ սպասվող արդյունքների ճշգրտումը,*

*- խնդիրների լուծման մեջ ստորաբաժանման մասնակցության ապահովումը,*

*- աշխատանքի արդյունավետության հիմնախնդիրների քննարկումը,*

*- սպասվող փոփոխությունների վերաբերյալ ենթականերին տեղեկացնելը եւ այլն:*

Առանձնացվում են ղեկավար-ենթակա փոխհարաբերությունների երկխոսության երկու համակարգեր ուղղաձիգ եւ հորիզոնական: Ղեկավար-ենթակա փոխհարաբերությունների ուղղաձիգ կոմանիկացիոն համակարգը կարելի է ներկայացնել հետնյալ գծապատկերի տեսքով.




Ղեկավար-ենթակա փոխհարաբերությունների հորիզոնական կոմունիկացիոն համակարգը կարելի է ներկայացնել հետեւյալ գծապատկերի օգնությամբ.




Ինչպես յուրաքանչյուր, այնպես էլ միջանձնային կոմունիկացիաներում կարող են հանդիպել արգելքներ, որոնցից են.

*1. ընկալմամբ պայմանավորված արգելքներ,*

*2. իմաստաբանական արգելքներ,*

*3. անորակ հետադարձ կապ,*

*4. վատ ունկնդրում,*

*5. աղմուկի զանազան տեսակներ:*

Այսպիսով, միջանձնային կոմունիկացիաները կենսականորեն անհրաժեշտ են ամբողջ կազմակերպության ներսում տեղեկատվության արդյունավետ գործառության, կառավարման խնդիրների հաջող լուծման համար:

***Աիդա ՍԱՐԳՍՅԱՆ***
***ՀՊՏՀ մագիստրանտ,***
***«ԿԶՆԱԿ» հիմնադրամի***
***մասնագետ***

Համագործակցություն

## Կնքվել են փոխըմբռնման հուշագրեր

ՀՀ մի շարք բուհերի եւ *«STARMUS»* գիտության, արվեստի ու երաժշտության միջազգային փառատոնի միջեւ կնքվել են փոխըմբռնման հուշագրեր՝ ամրագրելով համագործակցության եզրերն ու ընձեռվող հնարավորությունները:

Մասնավորապես՝ հուշագրեր են ստորագրվել Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, Հայ-ռուսական համալսարանի, ինչպես նաեւ *«ԱՅԲ»* կրթական հիմնադրամի հետ:

Համագործակցության շրջանակում կողմերը կմիավորեն իրենց ջանքերը Հայաստանում գիտության հանրահռչակման ուղղությամբ՝ դրանով իսկ ապահովելով *«STARMUS»* փառատոնի հիմնական նպատակը՝ ոգեշնչել եւ կրթել հետազոտողների հաջորդ սերնդին:

Համագործակցության մյուս շրջանակում 2022 թվականի սեպտեմբերից աշխարհահռչակ *«STARMUS»* փառատոնի խոսնակները, այդ թվում՝ Նոբելյան մրցանակակիրներ, դասախոսություններ կկարդան վերոնշյալ ուսումնական հաստատություններում:

Կրթաթոշակ

## Միջազգային օլիմպիադաների մասնակիցներին եւ հաղթողներին

2022 թվականին տեղի ունեցած *«Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»* եւ *«Աշխարհագրություն»* առարկաների դպրոցականների միջազգային օլիմպիադաների մասնակիցները եւ եզրափակիչ փուլերի հաղթողները կստանան անվանական կրթաթոշակ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել է վերոնշյալ օլիմպիադաների մասնակից եւ եզրափակիչ փուլերում հաղթած անվանական կրթաթոշակի արժանացած սովորողների կազմը: Ըստ այդմ՝ անվանական կրթաթոշակ կտրամադրվի 3 արծաթե, 13 բրոնզե մեդալակիրների, ինչպես նաեւ 7 մասնակիցների:

Նշենք, որ կրթաթոշակները տրամադրվում են՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի 605-Ա/2 հրամանով հաստատված *«Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման»* կարգի: Ըստ այդմ, եթե սովորողը միաժամանակ երկու կամ երեք հիմքով է ընդգրկվում կրթաթոշակ ստացողների ցանկում, ապա նա կարող է ստանալ դրանց հանրագումարի չափով կրթաթոշակ: Անվանական կրթաթոշակը սովորողներին տրվում է հաստատությունների միջոցով՝ մեկ տարվա հաշվարկով, իսկ ուսումնառությունը տվյալ հաստատությունում դադարելու դեպքում մեկ տարվա համար նախատեսված կրթաթոշակի չվճարված մասը սովորողին վճարվում է միանվագ: Սովորողներին խրախուսելու նպատակով սահմանված անվանական կրթաթոշակի նոր կարգը գործում է 2020 թ. հունվարի 1-ից:

Առարկայական օլիմպիադայի հաղթողների համար սահմանված են հետեւյալ կրթաթոշակները.

1. Եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝

*- առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 25.000 դրամ,*

*- երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 20.000 դրամ,*

*- երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 15.000 դրամ,*

*- եզրափակիչ փուլերի այլ մասնակիցներին՝ ամսական 10.000 դրամ:*

2. Այլ օլիմպիադաների (Ժաուտիկովյան միջազգային օլիմպիադա, Մենդելեեւյան միջազգային օլիմպիադա եւ այլն) եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝

*- առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 15.000 դրամ,*

*- երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 10.000 դրամ,*

*- երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 7.500 դրամ:*

3. ՀՀ առարկայական հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողներ (դիպլոմակիրներ)՝

*- առաջին կարգի դիպլոմակիրներին- ամսական 10.000 դրամ,*

*- երկրորդ կարգի դիպլոմակիրներին- ամսական 7.500 դրամ,*

*- երրորդ կարգի դիպլոմակիրներին- ամսական 5.000 դրամ:*

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Հայ-իրաքյան

# Հաջողված փորձի փոխանակում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Իրաքի կրթության նախարարության պատվիրակության եւ Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) Իրաքի գրասենյակի անդամներին:

Ժաննա Անդրեասյանն Իրաքի կրթության նախարարության տեխնիկական հարցերով փոխնախարար **Հուսեյն Սաբրի Համադ Ալ-Լամիի** հետ հանդիպման ընթացքում ներկայացրել է դպրոցական սննդի ծրագիրը, որն իրականացվում է Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) աջակցությամբ: Այս համատեքստում նախարարի տեղակալը խոսել է սննդի ծրագրի իրագործման, կազմակերպչական կառուցվածքի, Կառավարության ստանձնած պարտավորության, հիմնական ձեռքբերումների ու մարտահրավերների մասին:

*«Ողջունում եմ ձեզ, ուրախ եմ, որ փորձի փոխանակման եւ համատեղ ծրագրեր նախաձեռնելու հնարավորություն ունենք: Վստահ եմ, որ Հայաստանում գտնվելու ընթացքում դուք անձամբ հնարավորություն կունենաք ծանոթանալու ՀՀ դպրոցներում ներդրված սննդի ապահովման ծրագրի աշխատանքներին»,-* ասել է փոխնախարարը եւ հավելել, որ 2010 թվականից Հայաստանի բոլոր մարզերում ՊՀԾ-ն եւ ՀՀ կառավարությունը հաջողությամբ իրականացնում են դպրոցական սննդի ծրագիրը, որն այս տարիների ընթացքում դարձել է մարդկային կապիտալի զարգացման եւ ազգային աճի խթանման ամուր հիմք:



Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ ծրագրի հիմնական նպատակներից է դպրոցական սննդի կառավարման ազգային կարողությունների բարելավումը:

Ծրագրի աստիճանական ազգայնացումը սկսվել է 2017 թվականին, երբ Պարենի համաշխարհային ծրագիրը յուրաքանչյուր տարի մեկ մարզում դպրոցական սննդի ապահովման կառավարումը փոխանցել է ազգային ծրագրի կառույցին՝ մինչեւ 2023 թ. ծրագրի լիարժեք ազգայնացման տեսլականով: Նրա խոսքով՝ ՊՀԾ աջակցությամբ ամրապնդվել են ազգային կարողությունները՝ նպաստելով նպատակային քաղաքականության մշակմանը, որը հնարավորություն է ընձեռում լիարժեքորեն իրականացնելու դպրոցական սննդի ապահովման ազգային ծրագիրը:

Հուսեյն Սաբրի Համադ Ալ-Լամին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ նշել, որ Իրաքի կառավարությունը, ընդունելով դպրոցական սննդի կազմակերպման Հայաստանի հաջողված փորձը, ցանկություն ունի ուսումնասիրել Հայաստանում իրականացվող ծրագրերը:

Իրաքի ներկայացուցչի խոսքով՝ Հայաստան այցի նպատակն է Իրաքի կրթության նախարարությանը եւ կառավարական այլ շահագրգիռ կողմերին փոխանցել Հայաստանի կառավարության կողմից ստեղծված ու գործարկվող Ազգային դպրոցական սննդի ապահովման ծրագրի փորձն ու ռազմավարությունը՝ միաժամանակ հայ գործընկերներին ներկայացնելով արտակարգ իրավիճակներում դպրոցական սննդի ապահովման գործընթացի նախագծման եւ իրականացման իրաքյան փորձը:

Հանդիպման ավարտին Հուսեյն Սաբրի Համադ Ալ-Լամին հուշանվեր է հանձնել Ժաննա Անդրեասյանին եւ հրավիրել Իրաք՝ անձամբ ծանոթանալու դպրոցական սննդի ապահովման ազգային ծրագրի իրականացման աշխատանքներին:

Նոր հատկացումներ

# Կկառուցվեն մոդուլային կրթահամալիրներ եւ դպրոցներ

Կառավարության որոշմամբ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2022 թվականի բյուջեով նախատեսված կապիտալ ծրագրերում կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ:

Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական ուսումնական հաստատությունների մոդուլային շենքերի կառուցման ծրագրով ՀՀ բոլոր մարզերում՝ 10 բնակավայրերում, դպրոցների եւ կրթահամալիրների մոդուլային շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման եւ փորձաքննության համար նախատեսված 50 միլիոն դրամ գումարը կբաշխվի՝ ըստ ներքոնշյալ բնակավայրերի.

**Մոդուլային կթահարմալիրներ**

*- ՀՀ Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ*

*- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

*- ՀՀ Լոռու մարզի «Բլագոդարնոյեի հիմնական դպրոց» ՊՈԱԿ*

*- ՀՀ Կոտայքի մարզի «Նուռնուսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

*- ՀՀ Շիրակի մարզի «Հովունիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

*- ՀՀ Վայոց ձորի մարզի «Գողթանիկի հիմնական դպրոցե ՊՈԱԿ*

*- ՀՀ Տավուշի մարզի «Գոշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

Մոդուլային դպրոցներ

*- ՀՀ Արարատի մարզի «Նիզամիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

*- ՀՀ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

*- ՀՀ Տավուշի մարզի «Նավուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

Ցանկում ներառված դպրոցներն ընտրվել են՝ հաշվի առնելով տվյալ դպրոցի բնակավայրում միակը լինելու, մինչեւ 100 աշակերտ ունենալու սկզբունքը: Առաջնային պայման է եղել սեյսմակայունության խնդիրը. նախապատվությունը տրվել է այն դպրոցներին, որոնց շենքի հիմնանորոգումը կամ վերականգնումը տնտեսապես արդյունավետ չի համարվել: Մյուս կարեւոր պայմանը մոդուլային շենքի տեղակայման համար համապատասխան հողատարածքի առկայությունն է:

Նախադպրոցական կրթության կազմակերպման խնդիր ունեցող բնակավայրերում որոշվել է կառուցել մոդուլային կրթահամալիրներ: Որոշմամբ նախատեսվում է նաեւ 160 միլիոն դրամ հատկացնել ՀՀ Տավուշի մարզի *«Դովեղի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի մոդուլային շենքի կառուցման աշխատանքների մեկնարկի համար:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսվում է մինչեւ 2026 թվականն իրականացնել 300 դպրոցի եւ 500 նախադպրոցական հաստատության հիմնանորոգում, վերանորոգում եւ կառուցում:

Նախարարի հրամանով

# Հաստատվել է առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող դասարանների ուսպլանը

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով՝ հաստատվել է Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող 2-3-րդ, 5-8-րդ եւ 10-11-րդ դասարանների 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանը:

Ուսումնական պլանն ունի երեք՝ պետական, դպրոցական եւ անհատական (ընտրովի) բաղադրիչ: Օրինակելի ուսումնական պլանը ներառում է ուսումնական բնագավառները, յուրաքանչյուր բնագավառին հատկացված նվազագույն եւ առավելագույն շաբաթական ժամաքանակները, ըստ դասարանների պետական պարտադիր առարկայացանկը, պետական, դպրոցական եւ անհատական (ընտրովի) բաղադրիչները:

Ուսումնական պլանի պետական բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանվում են տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում ընդգրկված առարկաներին հատկացված նվազագույն ժամաքանակները եւ երաշխավորված առարկայացանկը: Ուսումնական պլանի պետական բաղադրիչի առարկաներն ուսումնասիրվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված հիմնական եւ նպատակային ծրագրերով:

Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է սովորողների ընտրությամբ՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան հաստատության սահմանած առարկաների, ԿԳՄՍ նախարարության հաստատած ծրագրերով երաշխավորված առարկաների, հաստատության կողմից ներդրվող նոր առարկաների, որոնց ծրագրերը հաստատվել են նախարարության կողմից, ինչպես նաեւ կարող է հատկացվել պետական բաղադրիչով սահմանված առարկաների:

Փորձարկվող դասարաններում ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամերը, որպես ուսումնական խմբակներ, հատկացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված *«Առողջ ապրելակերպ»* դասընթացին, 10-11-րդ դասարանում՝ *«Մասնագիտական կողմնորոշման ակումբներ»* ծրագրին, 10-11-րդ դասարանում՝ ռազմամարզական ճամբարներում՝ ՆԶՊ-ի ուսուցմանը, ինչպես նաեւ ուսումնական նախագծերին՝ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված *«Հանրակրթական հիմնական ընդհանուր եւ այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձեւավորման ու գործունեության եւ ուսումնական նախագծերի իրականացման կարգի»* համաձայն:

Ուսումնական պլանի պետական, դպրոցական եւ անհատական բաղադրիչները պետական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Պետական եւ դպրոցական բաղադրիչները պարտադիր են:

Հաստատությունն ուսումնական պլանի պետական, դպրոցական եւ անհատական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը(ները):

10-11-րդ դասարաններում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը, ինչպես նաեւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված առարկայական ծրագիր ունեցող այլ լեզու:

10-11-րդ դասարաններում ուսուցումն իրականացվում է հիմնական եւ նպատակային առարկայական ծրագրերով:

Միջնակարգ դպրոցի 10-11-րդ դասարանների եւ առանձին գործող ավագ դպրոցի 10-11-րդ դասարանների սովորողն առարկան կարող է ուսումնասիրել տվյալ ուսումնական առարկայի հիմնական կամ նպատակային առարկայական ծրագրով: Հաստատության կողմից այդ ծրագիրն ընդգրկվում է ուսումնասիրող խմբերում: Այն դեպքում, երբ սովորողը պետական բաղադրիչով տրված առարկան ուսումնասիրում է նպատակային ծրագրով, նույն առարկան հիմնական ծրագրով չի ուսումնասիրում:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***







Հորդորակներ Լեզվի կոմիտեի

# Օտար բառերից խուսափելու մասին

Հայոց լեզվի պահպանման մասին մտահոգվել են մեր լեզվի զարգացման տարբեր շրջաններում, քանզի գիտակցել են, որ հայերենը մեր պետականությունը կերտող եւ ամրապնդող ամենակարեւոր իրողությունն է, որով բնորոշվում է մեր ինքնությունը: Մենք էլ պետք է գիտակցենք դա:

Ներկայացնում ենք օտար բառերի եւս մեկ ցանկ: Գործածե՛նք դրանց հայերեն համարժեքները:

Օտար ուրիշ բառերի հայերեն համարժեքները հեշտ գտնելու համար առաջարկում ենք Լեզվի կոմիտեի կայքի (լեզվիկոմիտե.հայ կամ www.langcom.am ) որոնման համակարգը. ահա հղումը՝ լեզվիկոմիտե.հայ/օտար-բառեր/:

1. ակումուլյատոր – *կուտակիչ*
2. էնցիկլոպեդիա – *հանրագիտարան*
3. կոպիա – *պատճեն*
4. կալիբր – *տրամաչափ, չափ, մեծություն*
5. կոմպլեքս – *1. համալիր, 2. բարդույթ*
6. կոլեգա – *գործընկեր*
7. կոնտուր – *ուրվագիծ, եզրագիծ*
8. կլասիկ – *դասական*
9. կոմետա – գիսաստղ
10. կոմպլեկտ – *1. հավաքածու, 2. համալիր, լրակազմ*
11. կոնսերվատոր – *պահպանողական*
12. կոմերցիոն – *առեւտրային*
13. ներվ – *նյարդ*
14. շրիֆտ – *տառատեսակ*
15. շտրաֆ – *տուգանք*
16. շպրից – *ներարկիչ*
17. շպիոն – *լրտես*
18. պոզա – *դիրք, կեցվածք*
19. ռեկլամ – *գովազդ*
20. ռեզերվ – *1. պահեստազոր, 2. պաշար*
21. սկաներ – *ծրիչ, տեսածրիչ*
22. տրյուկ – *հնարք*
23. տուրիստ – *զբոսաշրջիկ*
24. տրասսա – *1. մայրուղի, 2. երթուղի, 3. ուղեգիծ*
25. ցիվիլիզացիա – *քաղաքակրթություն*
26. օվալ – *ձվաձեւ*
27. օրիգինալ – *1. բնագիր, նախօրինակ, սկզբնագիր 2. ինքնատիպ*
28. ֆինալ – *եզրափակիչ*
29. ֆանատ – *երկրպագու*
30. ֆիգուրա – *1. կերպար, կերպարանք, 2. կազմվածք, մարմնակառուցվածք*

# Հայերեն համարժեքները կիրառելու մասին

Դժվար է պատկերացնել, որ ընդամենը մի քանի տասնամյակ առաջ մարդկանց ականջին խորթ են թվացել այնպիսի բառեր, ինչպիսիք են *համակարգիչը, տեսախցիկը, մենաշնորհը, գործարարը, զբոսաշրջիկը, ժողովրդավարությունը* եւ այլն:

Ժամանակը ցույց տվեց, որ բառերն անընդհատ գործածվելով են հարազատ դառնում լսողությանը եւ սահուն մուտք գործում լեզու:

Նույնը տեղի է ունենում հիմա. նոր (կամ քիչ գործածվող) որեւէ բառ լսելիս լեզվակիրներն ընդդիմանում, հակառակվում, անգամ ծաղրում են՝ առանց պատկերացնելու, որ խաթարում են լեզվի բնականոն ընթացքը:

Հետեւաբար՝ կրկին ու կրկին հորդորում ենք վստահ գործածել օտար բառերի հայերեն համարժեքները՝ նաեւ այդպես նպաստելով լեզվի լիարժեք կիրառմանը:

Ներկայացնում ենք օտար բառերի հայերեն համարժեքների հերթական ցանկը: Նախորդները կարող եք տեսնել մեր կայքում՝ լեզվիկոմիտե.հայ (www.langcom.am):

1. ասիմետրիկ – *անհամաչափ*
2. գաստրոլ – *հյուրախաղ*
3. գրեյպֆրուտ – *թուրինջ*
4. դեմոնստրատիվ – *ցուցադրական*
5. էքսպերտիզա – *փորձաքննություն, փորձագիտություն*
6. լաուրեատ – *դափնեկիր*
7. լատենտ – *գաղտնի, թաքուն*
8. լոքեյշն – *տեղ, վայր*
9. կասկա – *սաղավարտ*
10. կաֆե – *սրճարան*
11. կլասիֆիկացիա – *դասակարգում, դասակարգություն*
12. կոմպլեմենտար – *1. համահավասար, 2. փոխլրացումային*
13. կոսմիկ – *տիեզերական*
14. կրիտիկա – *քննադատություն*
15. չեզլոնգ – *պառկոց, երկայնաթոռ*
16. պերիոդ – *շրջան, ժամանակաշրջան, ժամանակահատված, փուլ*
17. պրինցիպիալ – *սկզբունքային, սկզբունքորեն*
18. ռամկա – *շրջանակ*
19. ռատիֆիկացիա – *վավերացում*
20. ռեմեն – *ամրագոտի, գոտի*
21. ռեյս – *1. չվերթ, 2. երթաշրջան*
22. ռեպրոդուկցիա – *1. վերարտադրում, վերարտադրություն, 2. վերատպում, արտատպում*
23. սեթինգս – *կարգավորումներ*
24. սյուրպրիզ – *անակնկալ*
25. տոքսիկ – *թունավոր*
26. քենսըլ – *չեղարկում / չեղարկել*
27. ֆարֆոր – *ճենապակի*
28. ֆոտոմետր - *լուսաչափ*
29. ֆունդամենտ – *հիմք*
30. ֆրագմենտ – *պատառիկ, հատված, բեկոր, կտոր*

# Նպաստենք հայերենի արդիականացմանը

Տարբեր ոլորտների մասնագիտական խոսքում ամրացել են մի շարք օտար բառեր, որոնց հայերեն համարժեքները գուցե տեսել ենք բառարաններում, լսել ենք, գիտենք, սակայն չենք գործածում: *«Նիրհած»* բառերը շունչ են առնում մեր խոսքում, լիարժեք կյանքով ապրում միայն այն ժամանակ, երբ շրջանառության մեջ են դրվում:

Հարստացնե՛նք մեր խոսքը հայերեն լեզվամտածողությանը հարազատ բառերով եւ նպաստե՛նք դրանց տարածմանը:

1. արմատուրա – *ամրան*
2. գրաֆիտ – *գրաքար*
3. գայկա – *պնդօղակ, ամրօղակ, մանեկ*
4. դիամետր – *տրամագիծ*
5. զամոկ – *1. փական, 2. կողպեք, փականք, 3. փակաղակ*
6. էսկալատոր – *շարժասանդուղք*
7. էսքիզ – *1. ուրվապատկեր, ուրվանկար, 2. ուրվագիծ, 3. ուրվագիր*
8. իզոլյացիա – *մեկուսացում*
9. ինֆրաստրուկտուրա – *ենթակառուցվածք*
10. լոմ – *լինգ*
11. կարնիզ – *քիվ*
12. կանալիզացիա – *կոյուղի*
13. կարտոն – *ստվարաթուղթ*
14. կռան – *ամբարձիչ, կռունկ, վերամբարձ կռունկ*
15. կոնտեյներ – *բեռնարկղ*
16. կոնդիցիոներ – *օդորակիչ*
17. մակետ – *մանրակերտ*
18. մետլախ – *հախճասալ*
19. շայբա – *տափօղակ*
20. պավիլիոն – *տաղավար*
21. պարկետ – *մանրահատակ, հատակ*
22. պարապետ – *քիվապատ*
23. ռադիուս – *շառավիղ*
24. ռուբիլնիկ – *հոսանահատիչ, անջատոց*
25. սպիրալ – *պարույր*
26. վերտիկալ – *1. ուղղաձիգ, 2. ուղղահայաց*
27. վենտիլյացիա – *օդափոխում, օդափոխություն*
28. վինտ – *պտուտակ*
29. տրոս – *ճոպան*
30. ցիտադել – *միջնաբերդ*

# Հայերենը պետք է պահպանենք ու զարգացնենք մենք՝ հայերս

Գովելի է, որ հայախոսները սիրում են օտար լեզուներ սովորել: Շատերը նույնիսկ մեկից ավելի օտար լեզու գիտեն: Բնական է, որ լեզու սովորելու ընթացքում մարդիկ կարող են կրել օտար լեզվի ազդեցությունը: Սակայն բոլոր ազդեցությունները չեզոքանում են մայրենին շատ լավ իմանալու եւ նրա շահն ամեն ինչից վեր դասելու պարագայում:

Բնական պետք է լինի, երբ բազմալեզու հայախոսը մայրենիով խոսելիս ուշադիր լինի իր խոսքի նկատմամբ եւ գործածի հայերեն բառեր (այդ թվում՝ եզրույթներ): Օտար բառերով համեմված խոսքը լեզուների իմացության ցուցիչ չէ, այլ ավելի շուտ ցուցամոլություն:

Առաջարկում ենք օտար բառերի հայերեն համարժեքների նոր ցանկ՝ խրախուսելով հայերեն բառերի գործածումը:

Նախկինում հրապարակվածները կարող եք տեսնել մեր կայքի (լեզվիկոմիտե.հայ կամ www.langcom.am) *«Օտար բառեր»* բաժնում:

1. ամորֆ – անձեւ
2. անգլիցիզմ – անգլիաբանություն
3. աուդիտոր – 1. հաշվեքննող, 2. հաշվեքննիչ
4. աուտենտիկ – 1գ իսկական, բնագրային, 2. հավաստի
5. բրա – որմնաջահ
6. էրոզիա – 1. քայքայում, 2. ողողամաշում, 3. բժշկ. քերծվածք
7. թեոլոգիա – աստվածաբանություն
8. ինիցիալ – սկզբնատառ(եր), անվանատառ(եր)
9. լեոպարդ – ընձառյուծ
10. լուպա – խոշորացույց
11. կապսուլա – դեղապատիճ, պատիճ
12. կապրիզ – քմահաճույք, կամակորություն
13. կիոսկ – կրպակ
14. հեգեմոնիա – գերիշխանություն
15. հիերարխիա – պաշտոնակարգություն, աստիճանակարգություն, ստորակարգություն
16. մարշրուտ – երթուղի
17. մելոդիա – մեղեդի
18. մելոման – երաժշտամոլ, երաժշտասեր
19. մետաֆոր(ա) – փոխաբերություն
20. մետեորիտ – երկնաքար
21. մոդիֆիկացիա – ձեւափոխություն
22. նատուրա – 1. բնություն, 2. բնույթ, բնավորություն, 3. էություն
23. նեոլոգիզմ – նորաբանություն
24. նեւրոլոգ – նյարդաբան
25. պարալիչ / պարալիզ – կաթված
26. պելիկան – հավալուսն
27. պրաբել (ռուս. пробел) – բացատ
28. ռադիացիա – ճառագայթում, ճառագայթահարում
29. տաբլետկա – հաբ, դեղահաբ, դեղահատ
30. ունիվերսալիա – ընդհանրույթ

# Վերափոխումն Սուրբ Աստվածածնի (Խաղողօրհնեք)

*սկիզբը՝ էջ 1*



## Ճանապարհի հրաշքը

Երբ հանդիսավոր թափորը, սուրբ առաքյալների ու մյուս հավատացյալների ուղեկցությամբ, վառվող մոմերի, օրհներգությունների ներքո մահիճը տանում էր դեպի Գեթսեմանի, հանկարծ երկնքում՝ ներկաների անմիջապես գլխավերեւում, մի ընդարձակ, լուսափայլ ու պսակաձեւ ամպ գոյացավ եւ սկսեց ուղեկցել թափորին:

Երուսաղեմի անհավատ բնակիչները, թաղման թափորի անսովոր փառահեղությամբ զարմացած եւ հատկապես չարացած **Հիսուսի** մորը տրված մեծարանքի հանդեպ, այդ ամենի մասին հայտնեցին իրեա քահանայապետերին ու դպիրներին: Վերջիններս, **Քրիստոսին** հիշեցնող ամեն ինչի նկատմամբ զայրույթով ու վրեժխնդրությամբ համակված, անմիջապես իրենց ծառաներին ու զինվորներին ուղարկեցին՝ ցրելու թափորն ուղեկցողներին:

Հուզված ու գրգռված ժողովուրդը եւ զինվորները նետվեցին քրիստոնյաների կողմը, բայց այդ պահին պսակաձեւ ամպն իջավ ներքեւ ու կարծես պատնեշի նման շրջապատեց թափորը: Չնայած հետապնդողներին լսելի էին երգերն ու քայլերի ձայները, բայց ոչինչ տեսանելի չէր, եւ նրանցից շատերը կուրացան: Կուրացածներն **Աստվածամոր** մահճին զղջումով դիպչելուց հետո վերստացան իրենց մարմնավոր տեսողությունը:

Ըստ ավանդության՝ այդ օրը մեկ այլ հրաշք եւս կատարվեց:

Այն ճանապարհով, որով անցնում էր հանդիսավոր թափորը, մի հրեա քահանա էր գնում: Երբ լուսակիր ամպը կրկին վերեւում էր, վերջինս հստակորեն տեսավ առաքյալներին ու մյուս ուղեկցողներին, նրա մեջ արթնացավ **Քրիստոսի** հանդեպ ունեցած նախկին չարությունը, եւ նա նետվեց մահճի վրա՝ այն գետին տապալելու դիտավորությամբ: Սակայն հազիվ էր դիպել ձեռքերով, երբ հանկարծ հրեշտակն աննյութեղեն թրով հատեց նրա երկու ձեռքերը: Կտրված մասերը մնացին մահճին կպած, իսկ ինքն աղաղակով գետին տապալվեց՝ խորապես զղջալով իր խոսքերի եւ գործածի համար: Ուստի **Պետրոս** առաքյալը կարգադրեց նրան մոտենալ կտրված ձեռքերին: Բժշկվելուց հետո նա եւս միացավ թափորին, իսկ հետագայում դարձավ **Քրիստոսի** հետեւորդներից մեկը:

## Գեթսեմանիի պարտեզում

Այսպես Գեթսեմանի հասնելով՝ **Սուրբ Կույսի** մարմինն ամփոփեցին քարայրում եւ մուտքը մի հսկա քարով ծածկեցին: Առաքյալները եւ մյուս հավատացյալները չէին հեռանում **Աստվածամոր** գերեզմանից շուրջ երեք օր եւ անընդմեջ աղոթում էին: Այդ ամբողջ ընթացքում չէր դադարում հրեշտակների երգը:

Եվ միայն երրորդ օրը Գեթսեմանի եկավ **Բարդուղիմեոս** առաքյալը եւ սկսեց հուսակտուր ողբալ ու լաց լինել, որ չարժանացավ **Սուրբ Աստվածածնին** վերջին հրաժեշտը տալուն եւ Նրանից օրհնություն ստանալուն: Կարեկցանքից դրդված՝ առաքյալները որոշեցին բացել քարայրի մուտքը, որպեսզի նա կարողանա վերջին հրաժեշտը տալ: Բայց մուտքից քարը հեռացնելուց հետո բոլորը տեսան եւ հաստատեցին, որ **Աստվածամոր** մարմինն այնտեղ չէր, այլ վերափոխվել էր: Բարդուղիոմեոս առաքյալին էր վիճակված **Աստծու** իմաստուն նախախնամությամբ միջոց դառնալ **Աստվածամոր** վերափոխումը բացահայտելուն: Քարայրում միայն **Սուրբ Կույսի** հանդերձանքն էր:

## Աստվածամոր պատկերը

**Աստվածածնի** մահվան պատմությանը կից ավանդությունը հիշատակում է նաեւ նրա պատկերի մասին պատմությունը:

Ըստ ավանդության՝ ի մխիթարություն Բարդուղիմեոսի, որ ներկա չէր **Տիրամոր** թաղմանը, նրան հանձնեցին այն կենդանագիր պատկերը, որը **Սուրբ Կույսը** տվել էր Հովհաննես Ավետարանչին: **Մովսես Խորենացու** վկայությամբ՝ Բարդուղիմեոսն այն Հայաստան բերեց եւ զետեղեց Անձեւացյաց գավառի Դարբնոց քար կոչված տեղում, ուր հետագայում, ի պատիվ **Տիրամոր** պատկերի, կուսանոց հիմնվեց: Իսկ հայ եկեղեցիների բոլոր խորաններն **Աստվածամոր** անունով են եւ նրա պատկերով:

## Խաղողօրհնեք

*Հին Ուխտում* (Բ Օրենք ԻԶ 1-10) տարվա առաջին բերքը տարվում էր տաճար եւ ընծայվում **Աստծուն**: Ըստ օրենքի՝ դրանք ցորենը, գարին, խաղողը, թուզը, նուռը, ձիթապտուղն էին եւ այլն:

**Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին** օրհնության համար, որպես այգեքաղի երախայրիք, պտուղների միջից նախապատվությունը տալիս է **խաղողենու** ողկույզին. աշխարհակործան ջրհեղեղից հետո **Նոյ** նահապետը՝ *«այր հողագործ»* (Ծննդ. Թ 20), Արարատ լեռան ստորոտի դաշտավայրում այգի է տնկում եւ խաղողագործությամբ զբաղվում: Այդ ժամանակից ի վեր որթատունկի պտուղը դառնում է Արարատյան դաշտավայրի զարդը, համարվում պտուղներից ազնվագույնը եւ կոչվում **ՊՏՂՈՑ ԱՐՔԱ**: Այդ նվիրատվության արարողությամբ մարդիկ իրենց երախտագիտությունն էին հայտնում **Աստծուն**:

Մեր **Տերն** Ինքն Իրեն նմանեցրել է խաղողենուն, (Հովհ. ԺԵ 1-8). այն խորհրդապատկերն է **Սուրբ Աստվածածնի,** խորհրդանիշը *Նոր Ուխտի Քրիստոսահաստատ Սուրբ Եկեղեցու:* Այս առումով



էլ Հայ Եկեղեցում **Աստվածամոր** *Վերափոխման* տոնակատարության օրը *Սուրբ պատարագից* անմիջապես հետո տեղի է ունենում **խաղողօրհնեքի** արարողություն:

Ինչպես որթն իր կենարար հյութերով աճեցնում ու հասունացնում է ողկույզները, սույնպես եւ **Բանն Աստված** Իր **Սուրբ Մոր** ամենամաքուր արյունից Իր մարմինը կազմեց ու անճառապես միավորեց Իր **Աստվածությանը**:

Ինչպես խաղողենին իր պտուղների արյամբ՝ գինիով, մարդկային ազգին ուրախարար ու կազդուրիչ հյութ է տալիս, նմանապես եւ **Աստվածածնի** կենդանարար Ողկույզը՝ **Քրիստոս Աստված** Իր արյունն է պարգեւում յուրայիններին, ինչը սուրբ է, քավչարար ու կեցուցիչ՝ հավիտենական կյանքի պատճառ (հմմտ. Հովհ. Զ 54-55):

Խաղողօրհնեքի ընթացքում եկեղեցում կարդացվում է **Սուրբ Ներսես Շնորհալու** աղոթքը: Աղոթքում հիշատակվում է, որ **Աստված** ստեղծեց բուսականությունն ու պտղատու ծառերը, ապա **Ադամին** ու **Եվային** պարգեւեց ամբողջ *դրախտը*, բայց նրանք, օրինազանց գտնվելով, դրախտից արտաքսվեցին, իսկ երկիրը նրանց պատճառով անիծվեց: Սակայն **Աստվածորդու** աշխարհ գալով՝ անեծքի կապանքը վերացավ, եւ մարդիկ ձերբազատվեցին մեղքի ու մահվան ծառայությունից:

Խաղողի օրհնության ընթացքում աղոթքներ են հղվում ոչ միայն պտղի, այլեւ դրա մշակողի, ընծայողի, հողագործի եւ հողի համար՝ **Արարչից** խնդրելով առատ, բերրի, կարկուտից ու սառնամանիքից զերծ տարի:

Այսպիսով, *խաղողօրհնեքը* առհասարակ **Աստծուց** մարդուն պարգեւված բերքի՝ բոլոր տեսակի պտուղների օրհնությունն է:

Աստծու օրհնությունը ստանալու համար մենք աղոթքով դիմում ենք **Սուրբ Աստվածածնին.**

***Մայր եւ Կույս, աղախին Քրիստոսի, դո՛ւ, որ միշտ աշխարհի համար բարեխոս ես, բոլոր ազգերը քեզ երանի են տալիս:***

Մայր Աթոռ

## Նշվեց Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը



Օգոստոսի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը:

Բերկրառատ օրվա առիթով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Սուրբ Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի Վանորեից տեսուչ **Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը:**

Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագիչ Սրբազանը մասնավորապես ընդգծեց. *«Վերափոխման հիշատակի այս տոնը մեզ կարեւոր պատգամ է փոխանցում՝ լինել տեր եւ հնազանդ Աստծո կամքին: Աստվածածինը մեզ ամենքիս Իր կյանքի կարեւորագույն պատգամներից մեկն է փոխանցում՝ Աստծո խոսքին, ավետարանական պատգամին կատարյալ հնազանդությամբ կյանք ունենալ: Սուրբ Աստվածամոր օրինակով կոչված ենք հնազանդվելու Երկնավոր Հորը, կոչված ենք հավատքով դառնալու Աստծո լույսի կրողներն ու այն տարածողները, որպեսզի աշխարհը եւ մենք խավարի մեջ չմնանք»:*

Վերջում Արտակ Սրբազանը հայցեց Տիրամոր բարեխոսությունը մարդու եւ Աստծու հաշտության համար՝ պատգամելով վերափոխվել ու մեր անձերը աղոթքով սրբագործել:

Սուրբ Պատարագի ավարտից հետո եկեղեցական թափորը Սուրբ Գայանե վանքից ուղղվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց *«Խաղողօրհնեքի»* հանդիսավոր կարգը: Օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:





Գրականագիտական

# Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1919 թվական

**1919, 1 հունվար** – Սիմոն Վրացյանի խմբագրությամբ լույս է տեսնում *«Հայաստանի կոոպերացիա»* երկշաբաթաթերթի 1-ին համարը: Ունի բնաբան՝ *«Միությունը ուժ է»*:

1920-ից Խմբագրի փոխարեն՝ Խմբագրական կոլեգիա, գրական բաժնի վարիչ՝ Դավիթ Անանուն:

Չարենցի շատ գործեր տպագրվել են այստեղ:

**1919, 3 հունվար** – Թերթերը պաշտոնական հաղորդագրություն են տարածում. *«Դաշնակիցները վերջնագիր են ներկայացրել օսմանյան կառավարությանը՝ պահանջելով անմիջապես դատարկել Կարսը եւ թուրք զորքերը հեռացնել մինչեւ 1914 թ. սահմանը: Թուրքերը ոչինչ իրավունք չունեն Կարսից տանելու, բացի իրենց բեռածից: Դաշնակիցների պահանջով թուրքերը պարտավորվել են շուտով Կարսը հանձնել հայերին, նրա հետ եւ երկաթուղային բոլոր շոգեքարշերն ու վագոնները»:*

Հեռանալուց առաջ թուրքերը թալանում են Կարսը, ինչ հնարավոր է, տանում, ինչ հնարավոր չէ՝ այրում: Քաղաքի եւ գյուղերի հայ գաղթականությունը փորձում է վերահաստատվել նախկին տեղերում: Ժողովուրդը մատնված էր սովի եւ վարակիչ հիվանդությունների: Երկիրը դարձել էր մահվան հովիտ:

**1919, 8 փետրվար** – Բոստոնի *«Կոչնակ»*-ում (թիվ 6) լույս է տեսնում Հ. Թիրյաքյանի *«Հայ ազգը՝ իր լեզուեն դատելով»* հոդվածը, ըստ որի՝ *«…հայ լեզուի մեջ կը պակսի գեղագիտական ճաշակը, նկատի ունի դժվարահունչ բառերը՝ քրթմնջոց, կնտնտոց, ղողանջ: Մինչդեռ ամեն մի լեզու ունի իր բնաշխարհիկ ծագումնաբանությունն ու հնչականությունը, ինչն էլ նրա գեղագիտությունն է, մի բան, որ Չարենցը շատ լավ գիտեր եւ արտահայտեց «Մեր լեզունե (1932) բանաստեղծության մեջ. «Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս…»:*

**1919, 19 փետրվար** – Համայն հայությունը նշում է Հովհաննես Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Թումանյանի անունը դառնում է ազգը միավորող հոգեւոր կամուրջ, ով նաեւ իրենով է վկայում *«մեր ազգային ոգու անպարտելի հզորությունը»:* Հայ ազգի համար բոլոր առումներով այդ շատ ծանր օրերին նա նորից ու նորից հաստատում է Ամենայն հայոց բանաստեղծի իր շատ վեհ կոչումը: Հայոց բանաստեղծը ոչ միայն բանաստեղծ էր, այլեւ ազգային, քաղաքական ու հանրային գործիչ, հաշտարար ու ժողովրդական դիվանագետ: Փետրվարի 16-ին Թիֆլիսի Արտիստական թատրոնը բեմադրում է Արմեն Տիգրանյանի *«Անուշ»*-ը: Կովկասի հայ, ռուս, նաեւ վրաց մամուլը հեղեղված է Թումանյանին նվիրված հոդվածներով, հուշերով, լուսանկարներով ու բանաստեղծություններով, հանդես են գալիս գրեթե բոլոր երեւելի անունները: Նա հռչակվում է համազգային բանաստեղծ, Կովկասի բանաստեղծ:

Չարենցն այս միջավայրում էր եւ, որպես բացառիկ օրինակ, նրա առաջ էր հայրենական հանճարի լինելության կերպը, որին նա դեռ պիտի հասներ…

**1919, 21 փետրվար** – Թիֆլիսի *«Ժողովրդի ձայն»* օրաթերթում (թիվ 40) Գ. Սեւարդ ստորագրությամբ լույս է տեսնում գրախոսություն *«Սոմա»* պոեմի մասին:

**1919, 21 մարտ** – *«Մշակ»* լրագրում (թիվ 62) լույս է տեսնում Սուրխաթյանի գրախոսությունը՝ *«Եղիշե Չարենց: «Սոմա». նոր վեդյան պոեմ». «Մենք չենք կարող ժխտել մեզ անծանոթ հեղինակի համեստ շնորհքը: Սակայն անկազմակերպ ու անհավասարակշիռ է նա: <…> …հեղինակը հրդեհի, ավերի ու արյունի ետեւում քաղաքացիական կռվի էությունը չի ըմբռնել… Սա անարխիստական վանդալիզմ է: «Շուրջպարը» նրա օրգիան է»:* Պոեմը համարում է *«առանձին հատվածների արհեստական շաղկապում»: «Եթե հեղինակը կարող լիներ «ծառերի ետեւից անտառը տեսնելե, նրա երեւակայությունը սումբուրային չէր լինի <…>, իսկ աշխարհը միշտ «չարե ու վառվելու արժանի չէր դառնա»:*

Սուրխաթյանը բերում է *«չար»*-ով բնորոշված պատկերներ՝ գուցե մի պահ մոռանալով, որ եղել է 1915 թվական, որ ռուսական զորքերի նահանջից հետո հայոց աշխարհը արյունի ու մոխիրի չարիքի մեջ է, որ *«Սոմա»*-ն ավերների չարիքից, ընդհանրապես չար ուժերի անեծքից հառնող հայոց պետականության օրհներգն է:

**1919, 26 փետրվար** – Թիֆլիսում Հովհաննես Թումանյանի ծննդյան 50-ամյակին է նվիրվում Գորոդեցկու *«Բանաստեղծների համքարության»* 24-րդ նիստը:

**1919, փետրվար-մարտ, հուլիս-1920** – Թիֆլիսում-Հյուսիսային Կովկասում-Կարսում- Երեւանում գրում է *«Ողջակիզվող կրակ»* շարքը կազմող երեք ենթաշարքերը՝ *«Իրիկուն», «Վերադարձ», «Առավոտ»:* Ամբողջությամբ տպագրել է Եժ, I հատորում (1922): *«Ովքեր կարդացել են իմ «Ողջակիզվող կրակ» բանաստեղծությունների շարքը, նրանք գիտեն, որ այդ ժամանակ ես հեղափոխությունն ապրում էի՝ որպես մի ռոմանտիկական-հուզական բռնկման պրոցես, որի սկիզբը դրված է 1918 թ. տպված իմ «Սոմա» պոեմում: <…>: Ամբողջ «Ողջակիզվող կրակ» շարքը գրված է միեւնույն սիմվոլներով <…>, ամենուրեք հեղափոխությունը պատկերացված է որպես «Կրակի դուստր»»* (Եժ, VI, էջ 201):

Ս. Զորյան. *«Գրեց «Նժույգները» [«Առավոտ» ենթաշարքի «Կարմիր նժույգները թռչում են սրընթաց»] Բալյմոնտի հետեւողությամբ»* (*«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 82):

**1919, ապրիլ** – Թիֆլիսի Լ. Պողոսյանի *«Պրոգրես»* տպարանում հրատարակում է *«Ամբոխները խելագարված»* պոեմը: Ըստ Զորյանի՝ տպագրել է՝ վաճառելով Կարսից տեղափոխած *«մի քանի պղնձե կաթսա»* (Ս. Զորյան, Եժ, XI, 1985, էջ 311):

Այստեղ թե՛ հեղափոխությունն է, թե՛ հայոց պետականության վերականգնման ավետիսը՝ Սարդարապատի հերոսամարտով հանդերձ: Անդրադարձը *«Չարենց-նամե»*-ում է. *«Տասնըութ: // Թվական հրի: // Ողջակեզ – կարմրակեզ բոցում: // Արթնացավ արե՛ւ Նայիրին // Իմ հոգու նո՛ր զնգոցում: // Հրդեհ էր: // Անհատնում կրակ: // Արնաքամ վերքեր կարեվեր: // Ու կարոտդ հանկարծ ալվլան – // Ողջակեզ հոգիս արեւեց»* (Եժ, II, էջ 166-167):

Ինչպես *«Սոմա»*, այնպես եւ *«Ամբոխները խելագարված»* քնարական պոեմները հայոց պետականության վերականգնման օրհներգն են՝ փարած հեղափոխության արշալույսին: Սարդարապատի ճակատամարտը երկաթուղու կայարանում էր: Չարենցի պոեմի գլխավոր խորհրդանշանը դարձյալ երկաթուղու կայարանն է, որ ոտքի ելած ուժերը պետք է գրավեն: Սարդարապատում ժողովրդական ցասումը, իրոք, հասել էր խելագարության աստիճանի, որովհետեւ հայությունը բոլորեքյան շրջապատված էր հակառակորդի ուժերով. փրկությունը միայն միաբանված ու ինքնամոռաց կռիվն էր: Նաեւ երգ կար կռվողների շուրթերին. ժողովուրդը հայրենասիրական երգերով էր գնում կռվի: Պոեմի 8-րդ մասում երգի ձայնը նմանեցվում է զանգի՝ «…զանգ էր կարծես ձայնը նրաե: Հիշենք՝ Սարդարապատի ճակատամարտի ժամանակ անընդհատ հնչում էին Մայր տաճարի ու մյուս եկեղեցիների զանգերը:

*«Ճակատի զինվորը չէր միայն – ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կռվում էր թշնամու դեմ՝ ազատություն կամ մահ վճռական կամքով»* (Ս. Վրացյան, *«Հայաստանի Հանրապետություն»*, 1982, Թեհրան, էջ 140): Մայիսի 24-ին թուրքերը դիմում են փախուստի, որ շարունակվում է մինչեւ մայիսի 28-ը: Կոչերն ուղեկցվում էին հաղթական կանչերով ու երգերով:



Այս ոգեշունչ ուժը նաեւ *«Ամբոխները խելագարված»*-ի մեջ է, ուստի այն եւս հայոց պետականության վերականգնման օրհներգ է՝ ներշնչված ընդհանուր հեղափոխական տարերքի բարձր ոգեւորությամբ (մանրամասները՝ Դ. Գասպարյան, 1918-1920 թթ. պատմական իրադարձությունները եւ դրանց անդրադարձը ժամանակի հայ գրականության մեջ.- *«Քրիստոնյա Հայաստան»,* 1918, մայիս: Տես նաեւ՝ Ա. Ագուլյանի հրապարակումը՝ *«Գարուն»,* 1968, թիվ 9, էջ 62-64):

Ըստ Ս. Աղաբաբյանի՝ պոեմում Չարենցը լեզվապատկերային ներշնչումներ է ստացել Ատոմ Յարճանյանի դյուցազներգական ոճից (տես՝ *«Եղիշե Չարենց»*, I, 1973, էջ 155-160):

**1919, 12 ապրիլ** – Կարսը, որ 1918-ի ապրիլի 25-ից անցել էր Թուրքիային, անցնում է հայոց վերահսկողության ներքո: Կարսն առաջվանը չէր՝ քաղաքով անցել էին թուրքերը, ինչ հնարավոր էր տարել էին, ինչ հնարավոր չէր՝ այրել ու ավերել: Հեռացած ազգաբնակչությունը բռնում է վերադարձի ճանապարհը:

**1919, 13 ապրիլ** – Թիֆլիսում Արմենուհի Տիգրանյանը Լեյլիի ալբոմում գրում է *«Նորը լավ է, քան թե հինը»* բանաստեղծությունը՝ *«Գիտենք ամեն ինչի գինը, // Արբենք գինով ու սիրով»:* Կարճ ժամանակ անց այդ ալբոմը պետք է հայտնվեր Չարենցի ձեռքին, իսկ այդ կանայք՝ նրա կյանքում:

**1919, 14 ապրիլ** – ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանագրով գեներալ-մայոր Ստեփան Ղորղանյանը նշանակվում է ՀՀ Կարսի քաղաքացիական նահանգապետ եւ պաշտոնավարում մինչեւ 1920 թ. հոկտեմբերի 30-ը՝ Կարսի անկումը:

**1919, 18 ապրիլ** – *«Ամբոխները խելագարված»* պոեմը Թիֆլիսում նվիրում է Լեյլիին:

**1919, ապրիլ** – Երեւանում հանդիպում է դասընկերոջը՝ Աշոտ Փալանջյանին, կարոտի կանչով միասին մեկնում են Կարս: Աշխատանքի է անցնում չքավորներին օգնող պարենավորման կոմիտեում: Որպես թաղային տեսուչ՝ շրջում է տնից տուն եւ ցուցակագրում նպաստի կարոտ սովյալներին: Մատակարարների կողմից տեսնում է ալյուրի ալան-թալան՝ նաեւ այս նեղ դրության մեջ: Ռուսներից մնացած մի խարխուլ ինքնաթիռ՝ բուլղա՛ր թե ռումին օդաչուի հետ մեկտեղ, քաղաքի կենտրոնական թաղամասերից մեկում ընկնում խորտակվում է՝ ավերելով մի թշվառ կարսեցու գոմն ու սպանելով կովը: Չարենցը սրամտում է. *«Դաշնակցականների ռազմաօդային նավատորմը խորտակվեց»:*

**1919, ապրիլ** – Թիֆլիսի իր կացարանում, ուր լցված էին Կարսի հայրական տնից բերած իրերը, այդ թվում՝ նավթի մի մեծ լամպ՝ կապույտ լուսամփոփով (*«Լուսամփոփի՛ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով»*), ծանոթանում է Գեւորգ Աբովի հետ (27. XII. 1897 – 11. III. 1965): Ծանոթությունը գրական զրույցներով վերածվում է մտերմության:

1919-ի ապրիլի 30-ից օրեր առաջ լույս էր տեսել 1918-1919 թթ. Աբովի գրած բանաստեղծությունների *«Միայն կինը»* ժողովածուն: Թիֆլիսը ռուս ապագայապաշտների կենտրոններից էր, ուր 1914-ից գալիս էին ելույթների: Լինելով թիֆլիսցի՝ Աբովն այդ գրական միջավայրի մեջ էր, գրում էր ռուս ապագայապաշտների, մասնավորապես Իգոր Սեւերյանինի ազդեցությամբ:

Չարենցի գեղարվեստական հետաքրքրություններին ավելանում եւ աստիճանաբար խորանում է այս նոր հոսանքը: Ներքին գրական համադրությունների շերտերը շատանում ու ներձուլվում են:

Աբովի հետ գրական զրույցների ընթացքում է ձեւավորվում *«Երեքի»* դեկլարացիայի շուրջ հետագա մերձեցումը: Չարենցի հզոր հորձանքի շրջանակում էր նաեւ Աբովի *«Միայն կինը»* գիրքը: Ծանոթության շարժառիթն այսպես թե այնպես գիրքն էր:

*«Երեքի»* դեկլարացիայում հայտարարվելիք սեռական առողջ բնազդի նախադեպն այստեղ է. *«Միայն կինը»* արբեցումների տեսլապատրանքի մեջ հաշիշված տարփանքի վավաշոտ մեղսածոր երգերի հավաքածու է: Ահավասիկ *«Թիռապրումը»*.

*Հենց որ մատներս մերձենան*
*քո երեսին,*
*Էլ ո՞վ կիշխի իմ արբեցմա՛նն*
*ու իմ «ես»-ին,*
*Նյարդերիս մեջ հարյուրմոնյա*
*էլեկտրական*
*Լուսասփռում կներսուզվի.*
*Արյունս ա՛լ,- նարնջաբույր*
*Նվաղումով կնվազի.*
*Աչքերիս դեմ նրբատոներ:*
*Հե՛նց որ շուրթերս մերձենան*
*քո շուրթերին,*
*Հե՛նց որ շուրթերս արբենան*
*քո շուրթերից՝*
*Քո հեշտաասույզ շուրթերի հետ*
*կներսուզեմ*
*Նյարդահալիչ արեւհեղուկ.*
*Ու կլուծվեն ծվեն-ծվեն*
*Զգայարաններն իմ հեղհեղուկ*
*Ինձ կընդգրկեն ջերմին տոներ:*

***շարունակությունը՝ էջ 9***

# Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1919 թվական

*սկիզբը՝ էջ 8*

Առնական ιռչակված ինքնավստահ, տիրող *«ես»*-ը համակողմանի սեռական արբեցումի մեջ է: Աղոթքը նրա համար հեշտանքի պահն է. *«Հեշտաղերս մի աղոթք գիտեմ»* (*«Աղոթք»*), *«Ըմպում եմ ես ձեր // Շուրթերը բյուրե՛ղ ու լուսե» («Նկրտում»), «Մութում համբո՛ւյրը, հեշտե՛րը եռ, // Կրքի գալարքը – արեւհեղուկ // Գազլույս ծիծե՛ր ու ծիրածալքե՛ր, // Ճայթող ծափեր ու ծիծաղ ծիծղուկ» («Հուսաբեկ էջերից»), «Ձեր ստինքները նյարդահալի՛չ. // Բացե՛ք ծայրերը մի քի՛չ, մի քի՛չ <…> // Հովը կոնքիդ կոկիկ կողքի վրա // Քո ոտքերի ճեղքվածքի մեջ է սուրսրում // Ու մետաքսե կարճ շրջազգեստդ երկճեղքումե («Կեսօրեի պողոտան»): Հաջորդում են համանման տողեր ու պատկերներ. «Հենց նո՛ր ես լողացել. // Մեկնվել ես լուսավոր մահճիդ. // Ձեւերը լվացված մարմնիդ // Շոյում ես հաճույքով վճիտ», «Ոտքերդ նրբած հեշտանք… Վարդամիսի՝ բույրեր», «Իմ մեջ լուծիր բույրերդ հուր: Ավելի մե՛ծ հեշտանք – ախ չի՞քե, «Ինչու է կորսեթդ բանտել // Ծիծերդ ծնծղա. // Բացի՛ր, որ ցնծա // Իրանդ թել-թել, // Ինչո՞ւ ես ծիծաղդ բանտել»:*

Ահա հայտնի *«Էքսցեսուհի»* (Ի. Սեւերյանինից) բանաստեղծությունը.

*Դու եկար շոկոլադ գլխարկով,*
*Բարձրացրիր քո վուալը ոսկե,*
*Պարկետին շուրջ հածող հայացքով՝*
*Բոաղ ցած դրիր ռոյալին:*

*<…>: Օ, սուզվե՛լ քո ահեղ ջրվեժում*
*Ու հնձել քո հուլիսը հասուն:*

Ահա նաեւ Չարենցի բրոնզակոփ բառերի զուգաձայն զրնգոցը, որ *«Հեքիաթ»* շարքի *«Կին, քո գինին»* բանաստեղծությունն է.

*Գիշերները քո շուրթերը*
*հալած բրոնզ – բրոնզե տա՜պ.*
*Բրոնզե տա՛պ են,*
*բրո՛նզ, ե՛ռ կա՛թ են, բրոնզե կաթ:*

*Քո շուրթերը գիշերները տուր խմեմ:*
*Գիշերները քո շուրթերը բրոնզե տա՛պ,–*
*բրոնզե տա՛պ են,*
*Բրոնզե կա՛թ են,*
*Բրոնզ հեքիաթ…*

Չարենց – Աբով մարդկային, աշխատանքային ու գրական առնչությունն արդեն իսկ կար, որ բնականորեն պետք է ծնունդ տար *«Երեքը»* խմբակցությանն ու ծրագրին:

**1919** – Թիֆլիսում լույս է տեսնում *«Գրական գեղարվեստական ալմանախ»*-ի 5-րդ համարը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 50-ամյակին: Բանաստեղծություններով հանդես են գալիս Արմենուհի Տիգրանյանը, Վշտունին եւ ուրիշներ:

*«Հայ գրականության վիճակը»* խորագրի ներքո Զորյանի հարցերին պատասխանել են Շիրվանզադեն, Թումանյանը, Նար-Դոսը, Վրթանես Փափազյանը, Տիգրան Հովհաննիսյանը, Դեմիրճյանը, Դավիթ Անանունը, Սուրխաթյանը:

Թումանյան. *«Մինչեւ այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչեւ երկինք հասնի: Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ազատ Հայաստանն է, ազատ հարազատ հողը, ժողովուրդը:*

*Էդ ազատ Հայաստանն էլ կտա մեր գրական ուժեղ ու կենդանի լեզուն, որ լինելու է ժողովրդական բարբառների, գրաբարի ու եղած գրական լեզվի համադրությունը: Հայ ժողովրդական կենդանի բարբառների ազդեցությունն է լինելու տիրական: <…> հայ ժողովրդական բարբառները մի լեզու են եւ հայտաբերում են մի ամբողջական հայություն»:*

Նար-Դոս. *«Համաշխարհային պատերազմը եւ նրա հետեւանքով բռնկված հեղափոխությունը, որ նույնպես սպառնում է համաշխարհային բնույթ առնել, այնպիսի խոր անջրպետ է քաշել անցյալ եւ ապագայի միջեւ, հնի եւ նորի միջեւ, որ որեւէ կամուրջ ձգել, որեւէ հաջորդականություն սահմանել միանգամայն անհնարին պիտի լինի: Մեր աչքերի առջեւ հսկայական հեղաշրջում է կատարվում մարդկային կյանքի բոլոր ասպարեզներում եւ առանձնապես ցարդ եղած ընդհանուր մտապատրանքի մեջ: Վերագնահատվում են հին արժեքները, տապալվում են հավիտենական ճանաչված ճշմարտությունները, խորտակվում են հին կուռքերը, մի խոսքով՝ հին աշխարհը ճարճատում է հիմն ի վեր եւ պիտի փլի անխուսափելիորեն, տեղի տալով նոր հիմունքներով ստեղծված դեռեւս անծանոթ աշխարհի:*

*Այժմ կատարվում է միայն քանդման պրոցեսը, եւ այս պրոցեսը շուտ չի վերջանալ, որովհետեւ քանդվելու են այնպիսի շատ բաներ, որոնք տարբեր արմատներ ունեն:*

*Քանդման այս տարերային պրոցեսը, հարկավ, չի կարող անցնել առհասարակ գեղարվեստի եւ գեղեցիկ գրականության կողքով՝ առանց նրանց ձեռք տալու. գեղեցիկ գրականությունն իր բոլոր ճյուղերով <…> պիտի ընկնի ընդհանուր պերտուրբացիայի շրջապտույտի մեջ եւ պիտի վերակազմվի սոցիալ-տնտեսապես, քաղաքականապես եւ մտավորապես վերածնված նոր աշխարհի գեղարվեստական պահանջներին համապատասխանե:*

Փափազյան. *«Ներկան ոչինչ չունի ասելու ապագայի առաջադիմության մասին: <…>: Ապագան <…> հղի է մեծ սպասումներով: Դժվար է գուշակություններ անել: Մեր մինչեւ այժմ ունեցած պատկերացումներից բոլորովի՛ն պիտի տարբերվին հայ կյանքն ու ըմբռնումները:*

*Չի՛ թվում Ձեզ, որ 1914-ից ի վեր ո՛չ թե հինգ տարի է անցել, այլ, կարծես, հիսուն տարի: Այդպիսի մտավոր ոստնումները իրենց անակնկալներն են ունենում մանավանդ գեղարվեստական ըմբռնման համար: Սպասե՛նք ուրեմն: Հեռու չէ՝ վերագնահատումների, նոր արժեքների եւ նոր հասկացությունների ժամանակը»:*

Դեմիրճյան. *«Ինչ վերաբերում է քնարերգության, իմ կարծիքն այն է, որ մեր ավագ բանաստեղծների եւ կրտսերների մեջ մի ինչ-որ հոգեկան մեծ անջրպետ կա: <…>: «Դեպի Երկի՛ր»,- ահա մեր նշանաբանը. սա նշանակում է դեպի հայոց լեզու»:*

Դավիթ Անանուն. *«…այժմ տիրում է գեղեցիկ գրականության բացակայության շրջան»:*

Սուրխաթյան. *«Գեղեցիկ հայ գրականությունը երեկվա գրականություն է: Նա մեր կյանքի ներկան չի անդրադարձրել: <…>:*

*Քնարերգությունը հարուստ է՝ ըստ ամենայնի. նրա ուղիները հարթված են նորագույն ավագ եւ մասամբ կրտսեր բանաստեղծների կողմից: Քնարերգությունն ունի բազմակողմանի բովանդակություն ու մոտիվներ: Նա արդեն հաղթահարել է հին տրադիցիաները եւ թեւակոխել նոր շրջաններ: Հայ գրականության ընդհանուր բնույթը դեմոկրատական է…»:*

**1919, մայիսի սկիզբ** – Հ. Թումանյանի նախաձեռնությամբ եւ մտավորականության ջանքերով Թիֆլիսում հիմնադրվում է Կոմիտասի երկրպագուների ակումբ, որ պիտի զբաղվեր նրա ժառանգությամբ եւ հոգար Փարիզում շարունակվող բուժումը: Մայիսի 18-ին Արտիստական թատրոնում կազմակերպվում է կոմիտասյան առաջին համերգը: Ելույթ է ունենում Վահան Տեր-Առաքելյանը: Չարենցը կոմիտասապաշտ էր ի սկզբանե, այդ ժամանակ Թիֆլիսում էր եւ ամենայն հավանականությամբ մասնակցել է համերգին:

**1919, 22-23 մայիս** – Տերյանը Մոսկվայում ծավալուն դիմում է ներկայացնում ՀԿԿ Կենտկոմ եւ հայտնում Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերից իր դուրս գալու մասին՝ մնալով ՌԿԿ-ի շարքերում: ՀԿԿ-ի ղեկավարը սեւահոգի *«բանաստեղծ»* Գուրգեն Հայկունին էր, որ նախ փորձեց կանգնել Տերյանի ճանապարհին, այնուհետեւ՝ Չարենցի:

**1919, 28 մայիս** – ՀՀ կառավարությունը հռչակում է միացյալ եւ անկախ Հայաստանի տեսլականը, որով պիտի սկսվեր հայրենիքի տարածքների միավորումը:

**1919, 14-20 հուլիս** – Թիֆլիսում ռուսերեն լույս է տեսնում *«41օ»* ապագայապաշտական շաբաթաթերթը:

**1919, օգոստոս** – Սուրեն Երզնկյանի խմբագրությամբ Թիֆլիսում ռուսերեն լույս է տեսնում *«Пролетарская культура»* երկշաբաթաթերթի 1-ին համարը: Արտատպված են 1918-ից հրատարակվող մոսկովյան նույնանուն ամսագրի նյութեր:

Պ. Բեզսալկո. *«Այո՛, բուրժուական գրականությունը մենք խարույկի վրա չենք այրի, բայց, հավանաբար, ներկայումս նշանավոր վեպերը մենք չենք վերահրատարակի»:*

Մշակում են աշխատանքային մոտիվներ ու համապատասխան կշռույթներ, կոլեկտիվ ապրումների արտահայտման ձեւեր, շրջանառում են գեղարվեստի նոր բաղադրիչներ՝ պաշտամունքի հասցնելով երկաթը, հաստոցը, մեքենան…

Պրոլետարական գրականության տեսական ու գործնական նախադրյալները մշակելու էին կոչված անմիջապես հեղափոխությունից հետո Ռուսաստանում լույս տեսնող բազմաթիվ թերթեր ու ամսագրեր (*«Грядущее», «Горн», «Кузница», «Октябрь»* եւ այլն): Ահա պրոլետգրողների գրքերից մի քանիսի վերնագրերը՝ *«Երկաթե մեսիա»*, *«Երկաթե ծաղիկներ»*: Ահա Մ. Գերասիմովի *«Բանաստեղծություններ երկաթի մասին»* շարքի գործերից մեկի թարգմանաբար.

*Երկաթի մեջ տնքոցներ կան,*
*Շղթայված հնչյուններ կան,*
*Գիլիոտինի դանակների լաց կա,*
*Շրապնելային գնդակներ կան.*
*Երկաթի մեջ նրբություն կա,*
*Երկաթի մեջ կա աշուն…*

(*«Пролетарская культура»*, Մոսկվա, 1918, թիվ 4, էջ 31):

Ռուսաստանում ընթացող գրական այս տեղաշարժերը կարճ ժամանակ անց օրինակ դարձան հայ գրողների համար: Արդեն 1920-ին Թիֆլիսում լույս է տեսնում *«Պրոլետարական ստեղծագործություն»* շարքի առաջին գիրքը՝ ընդգրկելով պոեզիան:

**1919, 1 սեպտեմբեր-1 նոյեմբեր** – Ցուցակ Կարսի շրջանում բացված դպրոցների եւ նշանակված ուսուցիչների. *«Բաշ-Քյադիկլարի տարրական դպրոց: Ավագ ուսուցիչ՝ Գեւորգ Աբովյան: Ուսուցիչ՝ Եղիշե Սողոմոնյանե:* Աբովն ավարտել էր Ներսիսյան դպրոցը եւ ուներ մանկավարժական փորձ:

**1919, սեպտեմբեր** – Թիֆլիսում պարսկական հյուպատոսությունից ձեռք է բերում պարսկական անձնագիր՝ Եղիշե Սողոմոնյան, ծննդավայրը՝ Մակու: Խորհուրդ է տալիս ներքին կարգով (գումարով) այդպիսի անձնագիր ձեռք բերել նաեւ Աբովին, եւ Աբովը դիմում է այդ քայլին (*«Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին»*, 1961, էջ 111-112): Պահպանվել է պարսկական անձնագրի լուսապատճենը (ԳԱԹ, ՉՖ, 156):

**1919, 28 սեպտեմբեր** – Նիկոլ Աղբալյանի նախագահությամբ Երեւանում հիմնադրվում է Հայաստանի գրական ընկերությունը (*«Հայաստանի կոոպերացիա»*, 1919, թիվ 16, 15 հոկտեմբեր): Մեծ գյուղի, մայրագյուղի տպավորություն թողնող Երեւանը նաեւ այսպիսի նախաձեռնություններով պետք է աստիճանաբար նմանվեր մայրաքաղաքի: Ընկերության անդամներ են ընտրվում Լեռ Կամսարը, Բախշի Իշխանյանը, Համբարձում Մազմանյանը, Վեսպերը, Շահան Նաթալին, Խաչիկ Սամվելյանը, Արշավիր Խոնդկարյանը եւ ուրիշներ:

**1919** – Ստեղծվում է *«Պանդոկ»* գրական ակումբը. *«Երեւանում կազմակերպվել էր Հայաստանի գրողների միություն: Գրողների միությունից զատ՝ այդ միության մոտ 15 անդամներից կազմվել էր գրական խմբակ «Պանդոկ»* անունով (Վ. Ահարոնյան, Լեւոն Շանթը իր մասին.- *«Լեւոն Շանթ: Մարդը եւ գործը»*, Երեւան, 2019, էջ 20): Թումանյանի *«Վերնատան»* օրինակով գաղափարը Շանթինն էր, *«Պանդոկ»* անունն առաջարկել է բանաստեղծ Ոստանիկը: Ավագներից հավաքներին մասնակցել են Շանթն ու Աղբալյանը, երիտասարդներից՝ Զորյանը, Ռենը, Գառնիկ Քալաշյանը, Ոստանիկ Հովհաննիսյանը, Վահրամ Թերզիբաշյանը, Անուրջը, Դավիթ Անանունը, Վահան Խորենին, Արմենուհի Տիգրանյանը, Պերճուհի Բարսեղյանը, Անուշ Քալաշյանը, 1920 թ. հունվարի վերջին Երեւանում հաստատվելուց հետո՝ Չարենցը: Շաբաթը մեկ խմբակը հավաքվում էր *«Ռոստոմ»* գրադարանում, թիթեղյա վառարանի շուրջ, որի նավթը նախարարության պահեստից տրամադրում էր Աղբալյանը: Կարդում էին իրենց նոր գործերը, քննարկում, բանավիճում:

**1919, 16 հոկտեմբեր** – Հայաստանի Գրական ընկերությունը Երեւանում կազմակերպում է իր երկրորդ երեկոն՝ *«Մի նոր բանաստեղծ – Չարենց»:*

Դասախոսության ազդագիրը. *«Հիշեցնում ենք հայ գրասերներին, որ այսօր պառլամենտի դահլիճում երեկոյան ժամը 8-ին կայանալու է Հայաստանի գրական ընկերության հերթական ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ, ուր Ն. Աղբալյանը խոսելու է՝ «Մի նոր բանաստեղծ – Չարենցիե մասին»:*

Մարդիկ եկել էին տոմսակներով, դահլիճը լիքն էր:

Մինչ այդ նախատեսվել էր Չարենցին նվիրված երեկոն անցկացնել հոկտեմբերի 11-ին, բայց հետաձգվել էր:

ՀՌԿ օրգան *«Հայաստանի ձայն»* հասարակական, քաղաքական եւ գրական թերթը հոկտեմբերի 30-ի 9-րդ համարում Հ. Ս. ստորագրությամբ լրատվության մեջ հայտնում է. *«Հայաստանի Գրական ընկերության Բ. գրական երեկոն տեղի ունեցավ ամսույս 16-ին, շաբաթ օրը՝ երեկոյան ժամը 8-ին, պարլամենտի սրահին մեջ:*

*Երեկույթը կազմված էր երկու մասե՝ գրական եւ գեղարվեստական: Ա. Բաժնի մեջ ընկերության պատվավոր նախագահ Ն. Աղբալյան, ելույթ ունենալով «Եղիշե Չարենց իբրեւ նորագույն բանաստեղծ», շատ կոնկրետ կերպով ուրվագծեց անծանոթ բանաստեղծի բոլոր երկերու բնույթը եւ մանավանդ անոր նորագույն գրական ուղղությունը ռուսահայ գրողներու շարքին մեջ: Նա, վերջին տաս[ը] տարվա ընթացքին տիրող Տերյանի մելամաղձոտ եւ տարտամ տոնեն ազատվելով, ստեղծած է մի նոր տեսակի գրականություն, որ մեր նոր սերնդի հերոսական ընդունակությունները կը ցուցադրե եւ վեր կը հանե:*

*Հետո արտասանեցան երկու ոտանավորներ, որոնցմե առաջինը, որ արտասանեց օր. [տիկին] Ա. Տիգրանյան, թյուրքահայ բանաստեղծ Վ. Թեքեյանի գրչին կպատկաներ՝ «Կ'անձրեւե, տղաս»: Հեղինակը, որ ներկա էր, արժանացավ բուռն ծափահարության, որուն պ. Թեքեյան պատասխանեց մի քանի խոսքով:*

*Գեղարվեստական բաժնին մեջ նվագվեցան քանի մը կտորներ պիանոյի վրա ջութակի ընկերակցությամբ:*

*Երեկույթի տպավորություն բավական լավ էր, բայց Երեւանի ինտելիգենտ հասարակությունը շատ աչքի չէր ընկներ այնտեղ»:*

Հանրային կրթության եւ արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանը խոսում է մեկուկես ժամից ավելի, խոսքի մեջ ընթերցում է Չարենցի գրքերից հատվածներ:

Նախագահել է Վահան Խորենին, ով *«զգաստացնելու»* սպառնալիքով դիտողություն է արել բանախոսին, երբ ծափահարությունների ներքո անցել է *«Սոմա»*-ի եւ *«Ամբոխներ…»*-ի վերլուծությանը (տես՝ *«Ջահակիր»*, Բեյրութ 1963, թիվ 12): Այսինքն՝ պետք չէ կոմունիստական հակումներ ունեցող Չարենցին այդքան մեծարել…

*շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***

Եվ խաղ եւ արվեստ եւ գիտություն

# Հայ շախմատիստների աստղաբույլն ԱՄՆ-ում

**Հնդկաստանում ավարտված համաշխարհային հերթական օլիմպիադայի ավարտից հետո հանդիպեցինք Հայաստանի կանանց հավաքականի անդամ, միջազգային խոշոր մրցաշարերում իրեն հիանալի դրսեւորած գրոսմայստեր Աննա Սարգսյանի հետ, ով պատրաստվում է մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ (այդ մասին` մի փոքր ուշ):**



*- Աննա՛, դու Հայաստանի կանանց հավաքականի կազմում երկրորդ անգամն էիր մասնակցում համաշխարհային օլիմպիադային: Ինչպիսի՞ն են տպավորությունները:*

- Հնդկաստանում կայացած համաշխարհային օլիմպիադայում հանդես էին գալիս ռեկորդային թվով (187) երկրների պատվիրակներ: Ափսոս, որ բացակայում էին հատկապես Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի եւ Բելառուսի ներկայացուցիչները: Չնայած դրան` պայքարը մեդալների համար թեժ էր, լարված ու հետաքրքիր:

Եղան նաեւ անակնկալներ: Շատերը զարմացան, երբ օլիմպիադայի հենց առաջին օրը ԱՄՆ – Անգոլա մրցամարտում մեր Լեւոն Արոնյանը խաղաղ դաշն կնքեց ոչ այնքան հայտնի մրցակցի հետ: Անսպասելի էր նաեւ ԱՄՆ-ի տղամարդկանց թիմի 6-րդ հորիզոնականում հայտնվելը:

Հետաքրքիր փաստ արձանագրեցին վիճակագիրները: Դա այն էր, որ օլիմպիադայում 1-3-րդ տեղեր գրաված տղամարդկանց հավաքականների անդամները բնիկ տեղացիներ էին...

*- Մասնագետների կարծիքով` ոչ այնքան օրինաչափ էր Ուզբեկստանի տղաների «ոսկուն տիրանալը»:*

- Եկեք հիշենք, որ ուզբեկ շախմատիստներն առաջին անգամ փայլատակեցին 1992-ին Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում անցկացված համաշխարհային օլիմպիադայում, որտեղ նրանք արժանացան արծաթե մեդալների: Ի դեպ, հենց այդ օլիմպիադայում առաջին անգամ հանդես գալով` որպես նորեկներ, մենք շահեցինք բրոնզե մեդալներ: Այնպես որ, *«ուզբեկական»* ոսկին չպետք է այդքան պատահականություն համարել: Ճիշտ է, Ուզբեկստանի տղամարդկանց թիմում չկային համաշխարհային մեծության *«աստղեր»*, սակայն այնտեղ համալրված էին շնորհաշատ երիտասարդ շախմատիստներ, ընդ որում նրանցից երկուսի տարիքը չէր գերազանցում 18-ը:

Դե, իսկ մեր տղաները, անշուշտ, գերազանցեցին ոչ միայն իրենց, այլեւ բոլոր հայերի սպասելիքները: Ինչպես միշտ, տղաների վարպետությունն ու համերաշխությունն առավելագույն բարձրության վրա էր: Ճիշտ է, ոսկին *«երես թեքեց»* մեզնից, բայց չէ՞ որ մենք դրա շողշողուն փայլը վայելել ենք... երեք անգամ:

*- Մեր շախմատիստուհիները զբաղեցրին միայն 12-րդ տեղը:*

- Իհարկե, դա մեզ համար պատվաբեր չէր: Դժվարանում եմ պատճառներ *«հայտնաբերել»*. ըստ երեւույթին` մենք ցանկալի մարզավիճակում չէինք գտնվում:

*- Դե լավ, այժմ «շրջանցենք» հնդկական օլիմպիադան: Իհարկե, տեղյակ ես, որ տարբեր ժամանակներում ԱՄՆ են տեղափոխվել համաշխարհային օլիմպիադաների եռակի չեմպիոններ Վլադիմիր Հակոբյանը (ընտանիքով) եւ Լեւոն Արոնյանը, ԱՄՆ-ի կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Մելիքսեթ Խաչիյանը, ԱՄՆ-ի կանանց հավաքականի անդամ Տաթեւ Աբրահամյանը, գրոսմայստերներ Արամ Հակոբյանը եւ Արման Միքայելյանը: Նրանք բոլորը, Տաթեւ Աբրահամյանից բացի, ի դեպ նաեւ Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականների գլխավոր մարզիչներ Արման Փաշիկյանն ու Զավեն Անդրիասյանը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի շրջանավարտներ են: Այժմ ԱՄՆ մեկնելու քո հերթն է:*

- Այո՛, ամեն ինչ ճիշտ է: Ուսումս շարունակելու նպատակով ես իրավեր եմ ստացել ԱՄՆ-ի Միսսուրի նահանգի Վեբսթեր համալսարանի կողմից, որը հայտնի է նաեւ շախմատային լավագույն ավանդույթներով: Շուտով այդ համալսարանը կավարտի երեւանցի գրոսմայստեր Արամ Հակոբյանը: Ասեմ նաեւ, որ այդ նահանգում բնակություն է հաստատել նաեւ Լեւոն Արոնյանը:

*- Աննա, առայժմ դու Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանողուհի ես, մինչդեռ երկար ժամանակով մեկնում ես ԱՄՆ: Ի՞նչ կցանկանայիր հաղորդել բուհի պրոֆեսորա-դասախոսական կազմին:*

- Միմիայն շնորհակալություն: Նրանցից ստացած բազմաբնույթ գիտելիքներն իմ կյանքի դժվարագույն խաչուղիներում ինձ մշտապես օգնել են: Այո, չհասցրեցի ավարտել բուհը, բայց չեմ կասկածում, որ ԱՄՆ-ից վերադառնալուց հետո կշարունակեմ ավարտին հասցնել կիսատ մնացած գործերս: Ցանկանում եմ եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնել բոլոր դասախոսներին եւ իմ համակուրսեցիներին:

*- Շնորհակալություն նաեւ քեզ: Մենք ուշադրությամբ կհետեւենք քո ուսումնական եւ շախմատային հաջողություններին: Բարի ճանապարհ:*

# Միլիոնավոր մարդկանց հրապուրանքը

Շախմատը, որ պարսկերեն նշանակում է մահ արքային, ծագել է 5-րդ դարի վերջում, Հնդկաստանում: Այն հեռավոր ժամանակներում կոչվում էր չատուրանգ. խաղը բաղկացած էր չորս մասից: Պատմության մեջ վճռական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, երբ շախմատը վերածվեց երկու մրցակիցների խաղ եւ այդ ժամանակներից սկսած, այն կոչվեց չատրագ, արաբական երկրներում` շատրագ: Ըստ երեւույթին, դա արդեն տեղի ունեցավ Հնդկաստանի սահմաններից դուրս: Իսկ շախմատն այսօրվա բովանդակությունը ստացավ 16-րդ դարի կեսերին, երբ կիրառվեց *«փոխատեղում»* քայլը: Այդ տարիներին շախմատի հեգեմոնիան պատկանում էր Իսպանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի եւ Անգլիայի հետազոտողներին, ովքեր իրենց ուսումնասիրություններով զարգացրին շախմատի տեսությունը: Ժողովուրդների միջեւ կայացած առեւտրական կապերի զարգացումը նպաստեց նաեւ շախմատի հեղաշրջմանը: Իմաստուն խաղը Եվրոպա տեղափոխվեց 9-րդ դարում, այսպիսի երթուղիով` Հնդկաստան-Իրան-Միջին Ասիա-Արաբական երկրներ-Եվրոպա: Շախմատի մասին գոյություն ունի հետեւյալ հետաքրքիր լեգենդը:

Հնդիկ արքան, ծանոթանալով շախմատին, հիանում է խաղի սրամտությամբ եւ հնարավոր կոմբինացիաների առատությամբ: Իմանալով, որ այդ խաղն ստեղծող իմաստունն իր հպատակն է, արքան ցանկանում է հանճարեղ մտահղացման համար նրան պարգեւատրել եւ խոստանում կատարել նրա ցանկացած խնդրանք: Բայց երբ լսում է, որ նա, որպես պարգեւ, ցանկանում է ստանալ ցորեն, խիստ զարմանում է: Իսկ պահանջն այսպիսին էր. խաղատախտակի առաջին դաշտի համար մեկ հատիկ ցորեն, երկրորդի` երկու եւ այդպես շարունակ, հաջորդը` երկու անգամ ավելի ցորեն, քան նախորդը…

Արքան հրամայում է բավարարել շախմատը ստեղծողի պահանջը:

Սակայն հաջորդ օրը պալատական մաթեմատիկոսներն իրենց տիրակալին հայտնեցին, որ ի վիճակի չեն բավարարելու խորամանկ իմաստունի պահանջը:

Պարզվեց, որ դրա համար չի բավականացնի ոչ միայն հնդիկ շահի, այլեւ աշխարհի բոլոր շտեմարանների ցորենը:

Այսինքն` իմաստունը համեստորեն պահանջում է` 264-1 հատիկ ցորեն:

Այս ֆանտաստիկ մեծ թիվը գրվում է քսան նիշով: Մաթեմատիկական հաշվարկը ցույց է տալիս, որ շտեմարանը (բարձրությունը չորս մետր եւ լայնությունը` 20) պետք է տարածվի երկրից մինչեւ արեւ:

Հինավուրց խաղն այսօր միլիոնավոր մարդկանց հաճելի զբաղմունքն է: Զարգացնելով մարդու մտավոր կարողությունները, այն ձեւավորում է անհատի բնավորության լավագույն ձեւերը, բարձրացնում նրա գեղագիտական ճաշակը եւ դաստիարակում հաղթանակի հասնելու մեծ կամք: Շախմատն օգնում է ձեռք բերել այնպիսի կարեւոր հատկանիշներ, ինչպիսիք են ինքնատիրապետումն ու ինքնահսկումը, զսպվածությունն ու կամքը: Շախմատը պայքարում է նաեւ բացասական զգացմունքների` անվստահության, վախի եւ խուճապի դեմ: Վճռական իրադարձությունների ժամանակ շախմատը սովորեցնում է համբերատար սպասել եւ առանց հիմնավոր պատճառների` չկայացնել վերջնական որոշում: Հիշենք 1963-ին կայացած աշխարհի առաջնության մրցամարտը, երբ մեր հայրենակից Տիգրան Պետրոսյանն ուժերը չափելով աշխարհի չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկի հետ, պարտվելով առաջին օրը, չշտապեց արագորեն ռեւանշի հասնել, համբերատար սպասեց եւ միայն 5-րդ մենամարտում *«զայրացավ»*, հաղթանակ տոնեց եւ հավասարեցրեց մրցամարտի հաշիվը: Կամ` հիշենք Կարպով-Կասպարով աշխարհի առաջնության մրցամարտը (1984-85թթ.), որտեղ չեմպիոնի հավակնորդ Կասպարովն իր առաջին հաղթանակը ձեռք բերեց… 32 հանդիպում անց:

Շախմատը սովորեցնում է նաեւ օբյեկտիվորեն գնահատել սեփական եւ ուրիշների հնարավորությունները: Անհաջողության մատնված շախմատիստը քննադատորեն է վերաբերվում իր սխալներին ու վրիպումներին, հաշվի առնում ուրիշների կարծիքը, այսինքն` տեղի է ունենում ինքնագնահատման եւ ինքնադաստիարակման գործընթաց: Աշխարհի 12-րդ չեմպիոն Անատոլի Կարպովը նկատել է, որ մրցաշարերում երեխաները սովորում են ոչ միայն մտածել եւ խաղալ, այլեւ իրենց պատշաճ պահել հասարակության մեջ, հարգել բոլորին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրոցներում եւ բուհերում, որպես կանոն, շախմատիստների առաջադիմությունն ավելի բարձր է, քան ոչ շախմատիստներինը:

Անչափ ուրախալի է, որ շախմատը Հայաստանում մեծ մասսայականություն եւ հարգանք է վայելում: Եվ միանգամայն օրինաչափ է, որ մեր շախմատիստները միջազգային մրցաշարերում հասել են վիթխարի նվաճումների եւ հայկական շախմատային դպրոցի հեղինակությունն աշխարհում շատ բարձր է: Դրա վառ ապացույցն այն է, որ Հայաստանի հավաքականը համաշխարհային օլիմպիադաներում երեք, իսկ աշխարհի թիմային առաջնություններում չորս անգամ նվաճել է բրոնզե մեդալներ: Իսկ կանանց եւ տղամարդկանց հավաքականները դարձել են Եվրոպայի չեմպիոններ: Եվ, վերջապես, առանձնացնենք ամենափայլուն նվաճումը, երբ 2006-ին մեր տղաները դարձան 37-րդ համաշխարհային օլիմպիադայի հաղթողներ: Ի ուրախություն եւ հպարտություն մեզ, շախմատի հայ ասպետները պատմական այդ նվաճումը կրկնեցին եւս երկու անգամ` 2008-ին եւ 2012-ին:

Ասենք նաեւ, որ հին Հայաստանում շախմատին անվանում էին ճատրակ, երբեմն` ճատրկուց: Շախմատի մասին գրավոր վկայությունները վերաբերում են 12-րդ դարին: Սակայն հնագիտական պեղումները հաստատում են, որ հայկական լեռնաշխարհում շախմատը հայտնի էր ավելի վաղ. ըստ ակադեմիկոս Լ. Օրբելու` 9-րդ դարում: Հայ պատմիչները նույնպես անդրադարձել են շախմատին, մասնավորապես կարելի է առանձնացնել Մխիթար Անեցու (12-դր դար) եւ մատենագետ Վարդան Արեւելցու (13-րդ դար) աշխատությունները:

Շախմատին վերաբերող տեղեկություններին հանդիպում ենք նաեւ Մխիթարյան միաբանության հրատարակության *«Հին Հայաստանի խաղերի մասին»* գրքում:

Շախմատը համաժողովրդական խաղ է, միլիոնների խաղ: Եվ իրոք, բոլոր ժամանակներում շախմատը չի փոխել իր հմայքն ու փայլը եւ դարեր անց, այսօր էլ մարդկության հաճելի եւ հավատարիմ ուղեկիցն է:

Շախմատ խաղում են բոլորը` անկախ տարիքից ու մասնագիտությունից, մաշկի գույնից ու սոցիալական վիճակից: Շախմատն անսպառ ու անեզր, բազմաբնույթ ու բազմահարուստ հնարքներով ու կախարդանքներով մեզ զմայլում եւ գեղագիտական հաճույք է պատճառում:

Տարբեր բնագավառների համաշխարհային ինչպիսի հսկաներ են ընդգծել շախմատի առավելությունները. Տոլստոյ, Տուրգենեւ, Դոստոեւսկի, Լերմոնտով, Պուշկին, Դանթե, Ցվայգ, Գորկի, Մայակովսկի, Դիդրո, Վոլտեր, Ներուդա, Լոմոնոսով, Մենդելեեւ, Նյուտոն, Կապիցա, Բոկաչո, Ռաբլե, Շոպեն, Բեթհովեն, Ռեմբրանդ, Ռեպին, Սուվորով, Նապոլեոն, Պետրոս Առաջին, Լյուդովիկոս XII, Շոստակովիչ, Օյստրախ, Մարքս, Լենին… Այս ցուցակը կարելի է երկար շարունակել:

***Գագիկ ՀԱԿՈԲՅԱՆ***
***ԽՍՀՄ սպորտի եւ ՖԻԴԵ-ի վարպետ, մեր շախմատային մեկնաբան***



## Հայտարարություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի թիվ 2 *«Զարթոնք» մ/մանկապարտեզ»* ՀՈԱԿ-ի խորհուրդը *«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի թիվ 2 «Զարթոնք» մ/ մանկապարտեզ»* ՀՈԱԿ-ի դաստիարակի՝ (1 դրույք), ֆիզկուլտ հրահանգչի՝ (0,5 դրույք) եւ երաժշտության դաստիարակի՝ (1 դրույք) պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարում ենք մրցույթ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

**Հաստատության դաստիարակի , Ֆիզկուլտ հրահանգչի եւ դաշնակահարի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝**

*1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,*

*2) բարձրագույն կրթությունը:*

**Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝**

*1) Դիմում՝ հաստատության տնօրենի անունով (ձեւ 1),*

*2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,*

*3) Կրթության մասին փաստաթղթի պատճենը,*

*4) Ինքնակենսագրություն (ձեւ 4),*

*5 ) Աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում}*

*6 ) Մեկ լուսանկար 3x4:*

Փաստաղթերի պատճենները համեմատվում են բնօրինակի հետ, իսկ բնօրինակը վերադարձվում է հավակնորդին, եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը աբողջացված չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք :

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչեւ 15:00, բացի ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2022 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 1400-ին,*** «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի թիվ 2 *«Զարթոնք»* մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Սեւան, Շահումյան 31:

Տեղեկությունների համար զանգահարել (098) 91-01-73 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Աբովյանի հ. 4 ավագ դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 17-ից մինչեւ օգոստոսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ ԿԳՄՍՆ Աբովյանի հ. 4 ավագ դպրոցում, ՀՀ Կոտայքի մարզ, հասցեն՝ ք. Աբովյան, Ռոսիա 26:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 90-93-93 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (15 դասաժամ), տեխնոլոգիայի (24 դասաժամ), ինֆորմատիկայի (26 դասաժամ), ֆիզկուլտուրայի (24 դասաժամ), չինարենի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 17-ից մինչեւ գոստոսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 2-ին՝ ժամը 15:00-ին,*** Երեւանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Բաղրամյան պողոտա 16:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 52-64-22, (010) 56-06-00 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ *«Երեւանի պարարվեստի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի ֆրանսերենի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- Դիմում*

*- Կրթության մասին հավաստող փաստափուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը)*

*- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)*

*- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)*

*- ինքնակենսագրություն*

*- մեկ լուսանկար՝ 3ճ4 չափի*

*- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը)*

*- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան,կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)*

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 17-ից մինչեւ օգոստոսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի պարարվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Բայրոնի 5:

Տեղեկությունների համար դիմել armballet@mail.ru էլեկտրոնային հասցեով կամ զանգահարել՝ (010) 56-44-26 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ *«Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ»* ՊՈԱԿ-ի ընտրած մարզաձեւի տեսության (հեծանվային սպորտ) մոդուլի դասախոսի թափուր տեղի համար (շաբաթական 4 ժամ):

Մրցույթը անց է կացվում բանավոր՝ հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդելիք առարկային եւ մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- Դիմում*

*- Կրթության մասին հավաստող փաստափուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը)*

*- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)*

*- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)*

*- ինքնակենսագրություն*

*- մեկ լուսանկար՝ 3ճ4 չափի*

*- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը)*

*- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան,կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)*

***Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2022թ. սեպտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչեւ 15:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

***Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 6-ին՝ ժամը 15:00-ին,*** Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում, հասցեն՝ Արամ Մանուկյան 31:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 03-55-66 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (22 դասաժամ), երաժշտության (15 դասաժամ), ֆիզկուլտուրայի (21 դասաժամ), ինֆորմատիկայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 17-ից մինչեւ գոստոսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 2-ին՝ ժամը 13:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 10-09-58 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Պտղնիի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի Հայոց եկեղեցու պատմության (7 դասաժամ), ինֆորմատիկայի (7 դասաժամ), ֆիզիկայի (2 դասաժամ), պատմության (14 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ), ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), երաժշտության (7 դասաժամ), կերպարվեստի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

